

*On order*

ԹԺԻՇԿԱ ՍԻՐԵՅՆ ՀԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑ

# ՎԵՀԱՓԱՌ ԻԶՄԻՐԼԵԱՆԸ

«Սկզբունքներու տարբերութիւնը ա-  
ւեր և աւար յառաջ կը բերէ:

«Կարծիքներու ազատութիւն և տար-  
բերութիւն կրնայ լինիլ, ուրո՞ւ-  
կերայ աւրու հետ շփուելու առ, որ  
կեանք և լոյս սփոնն»:  
ԻԶՄԻՐԼԵԱՆ

ՊԱՏԿԵՐՈՎ

Էլեքտրաշարժ տպարան Ե. Աւետիքեանի, Մոսկվա.

1910.

## ԲԺԻՇԿ ՍԻՄԷՈՆ ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑԻ

### Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ

- 1) «ՆՈՐ - ՓՈՐՉ» գրականական և հասարակական հանդէս. տետրակ № 1 (իմբադրեց՝ Յովհաննէս Շահնազարեան), էջ 128, Մոսկա, 1897 թ., (սակաւաթիւ) գինն է . . . . . 75 կ.
- 2) ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ «Անմեղ զոհեր» (Կանալք Գ. Չուկարի վէպիկներում). էջ 56, Մոսկա, 1899 թ., (սպառած) գինն է . . . . . 50 կ.
- 3) ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ «Խ. Աբովյանի գրականական և հասարակական գործունէութիւնը». էջ 23, Մոսկա, 1899 թ., (սպառած) գինն է . . . . . 35 կ.
- 4) Մելքոն Մանդինեան «Մի էջ հայկական ուսուցման պատմութիւնից». էջ 134, Թիֆլիս, 1910 թ., գինն է. 60 կ.

### Բ. ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ

- 1) Երէցփոխանութեան հարցը Մոսկայում. էջ 31, Մոսկա, 1895 թ., (սպառած) գինն է . . . . . 25 կ.
- 2) Основные положения физиологической психологии по Вундту, Цигену и Мейнерту. I. Теория апперцепции В. Вундта. Стр. 63, Москва, 1898 г., цѣна . . . . . 75 կ.
- 3) Ճառ Երևանի Հայոց Թամական Հոգենոր Դպրանոցին ներկայանալիս. էջ 23, Մոսկա, 1899 թ., (սպառած) գինն է . . . . . 25 կ.
- 4) Երևանի Հայոց Թամական Հոգենոր Դպրանոցի աշակերտներին (մի քանի խրատներ). էջ 14, Մոսկա, 1899 թ., (սպառած) գինն է . . . . . 20 կ.
- 5) Երևանի Հայոց Թամական Հոգենոր Դպրանոց և Հասարակութիւնը. էջ 32, Մոսկա, 1899 թ., (սպառած) գինն է . . . . . 30 կ.
- 6) Որոշ կանոնադրութեան և ծրագրի անհրաժեշտու-

# ԲԺԻՇԿ ՍԻՄԵՈՆ ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑ

# ՎԵՀԱՓԱՆ

# Ի Զ Մ Ի Ր Լ Ե Ա Ն Ը

“Սկզբունքներու տարբերութիւնը աւել և աւար յառաջ կը բերէ:

„Կարծիքներու ազատութիւն և տարբերութիւն կրնայ լինիլ, որոնք այն կերպով իրարու հետ շփուելու են, որ կեանք և լրյա սփռեն:”

ԻԶՄԻՐԼԵԱՆ

ՊԱՏԿԵՐՈՎ

Էլեքտրաշարժ տպարան Ե. Աւետիքեանի, Մոսկվա.

1910.

ԱՐՄԵՆԻԱ  
ԳՈՒՇԵՐ

ա զամանակակից աղքատութեան  
համար այս աշխատավոր աղքատութեան  
համար ա մասնաւոր աղքատութեան  
մաս պահանջման ամենալավ աղքատութեան  
այս աղքատութեան ամենալավ աղքատութեան  
այս աղքատութեան ամենալավ աղքատութեան  
այս աղքատութեան ամենալավ աղքատութեան



С: 2916/2022

Տիպոգրիա Ավետիկով Յ. Յ անդրաս Կամացականի  
Типографія Е. Аветикова  
Москва, Б. Пубянка, Варсонофьевский пер., домъ Бауэръ.

Sektion Orient- u. Altertumswissenschaften  
Byzantinistische Bibliothek



† Տ. Տ. ՄԱՏԹԵՈՍ Բ.  
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ա ԱՌՋՈՂԻ Հ. Յ. †  
ՍՈՒՐՅՈՂՄԲ ՀԸ ԽԱՄԱՀՄՎ ԱՅՆԿՈՎԵՐ  
ՑՈՒՆԱ ՀԵՄՎԵՐՆ

# ՎԵՇԱՓԱՆԻ ԻԶՄԻՐԼԵԱՆԸ

(Քաղաքացիութեան ասուածը և Մասկարյակ Եկեղեցւում՝ 1910 լ-ի  
դեկտեմբերի 19-ի հոգի հանդապնին)

Ազգային և առաջարկային տարրերութիւնը ա-  
մբ և աւար լառաջ կը բերէ:

Պարծիկներու ազատութիւն և տարբերութիւն կրնայ լինի, որոնք այն կերպով իրարու հետ շփուելու են, որ կեանք և լոյս սփռեն:

ԻԶՄԻՐԼԵԱՆ

**ՌՈՒՍԻԱ. ԺԱՄԱՆԵԼԸ:** ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:

Ընդամենը մօտաւորապէս մի տարի և ութ ամիս  
սրանից առաջ, 1909 թւի մայիսի 25-ին, ուստա-  
հայերիս ներկայացուցչութիւնը՝ խոնւած Օդեսսակի  
ժովկեզրին՝ սրտատրով սպասում էր իր ազգանախը  
Վեհափառ Հայրապետին։ Մեր յովերին, մեր սրտերի  
բարախին խօսակից էին կապուտակ երկնքից երկիրը  
դիտող կենսաբեր արեգակը, մեր առաջ փուլած ան-  
հուն-անեղը շրերի խօսնակ՝ զովաշունչ զեփիւռը...

Ահա մօտեցաւ շոգենաւը, խաղաց-ամրացաւ. խարիսխը, ձգւեց սանդուխը-կամարը, ցամաք են իջնում ճամբորի ները... Մի քանի ըովէ ես... և ցամաք է

իշնում ազգընտիր Քահանայապետը՝ ուղեկցութեամբ  
Թիւքահայերի և Ուուսահայերի պատւիրակների։ Խո-  
րասոյզ, մտախոհ է Քահանայապետի դէմքը, նոյն իսկ՝  
քայլւածքը։ «Կեցցէ՛ Վեհափառ Տէր» շարունակ լըս-  
ւող ողջունին նա պատասխանում է ալեզարդ գլխի  
թեթև շարժւածքով։ Հանուրիս ուրախութեան այդ  
վայրկեանին մենք չտեսանք անդորր մտքի հետք—  
սովորական թեթև ժպիտն իսկ...

Սլացան կառքերը, և մենք Օղեսսալի հայ գաղութի  
եկեղեցումն ենք։ Որքան նեղիկ թւացին այդ օրն  
այդ եկեղեցու կամարները, երբ ազգընտիր Վեհը, կարճ  
աղօթքից ետ, գարձաւ իր սիրեցեալ հօտին՝ տալու  
հայրապետական իր անդրանիկ ողջոյնը և իր անդ-  
րանիկ պատւէրը—նախ՝ սիրել միմեանց և երկրորդ՝  
գիտակցել տիրող Օրէնքի սահմանները, շարունակ կալ-  
մնալ օրինական միջոցների շրջագծում,—ասում ենք՝  
որքան նեղիկ թւացին այդ օրն Օղեսսալի հայ գա-  
ղութի եկեղեցու կամարները, երբ, իբր արձագանք  
Վեհի խօսքին, բարձրացաւ խոնւած բազմութեան  
խլացուցիչ «Կեցցէ՛ Վեհափառ Տէր» գոչիւնը... Բարձ-  
րացաւ և մի ակնթարթ միայն տևեց. Վեհափառ  
ծեռքի շտապ շարժւածքով անմիշապէս կանգնեցրեց  
գոչիւնը։ Եւ պէտք էր այդ բողէին, այո՞ այդ իսկ  
բողէին տեսնել «ընտրեալ Կաթողիկոս Ամենայն Հա-  
յոց» Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեանին՝ ըստ  
արժանւոյն որակելու «Երկաթէ Պատրիարք»-ի համ-  
բաւն իւրացրածի կամքը, բնորոշելու-գնահատելու  
Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեանի գիտակցու-  
թիւնը՝ իր առաջ դրւած գործի ժանրութեան նկատ-  
մամբ։ «Շատ գոյն, +է՛ Նոյն էր. կաղալէն՝ Ռուլէ՛ + զա-

պոնտ»—պատգամեց այդ բոպէին «ընտրեալ կաթողիկոս»-ը: Եւ այդ պատգամը կայ-մնալի իբր անմեռ կոթող Ս. Գրիգոր Լուսաւորչի նւիրական Գահը բարձրացած Մատթէոս Բ.-ի անհագութանո-նեան...

ՀԱՅՑԱՐ ՏԱՄԱՅՆԱՌ ԱԴՐԱՋ ԱՄԱՅՆԱՌ

ՊԼԱՏՖՈՐՄԱ-ԾՐԱԳԻՐԸ:

Վերջին կաթողիկոսական ընտրութեան օրերում հրապարակի վրա դրւեց, ի միջի այլոց, կաթողիկոսացւի պյատքորհն - ծրադրի հարցը: Ժամանակի աղդեցիկ հոսանքները շատ և երեմն անորակելի երերումներ ստեղծեցին կաթողիկոսացուների ցանկի շուրջը: Պայքարը փակւեց 1908 թւի նոյեմբերի 1-ին, երբ, զրեթէ միաժան, ընտրեալ կաթողիկոս յայտարարւեց Թիւրքահայերի Պատրիարք Մատթէոս արքեպիսկոպոս իզմիրլեանը: Ո՞ւ էր նա՝ ըստ պյատքորհն ծրադրի: Այդ հարցին պատասխանում են իզմիրլեան Պատրիարքի 1909 թւի յունւարի 1-ի<sup>1)</sup>, իզմիրլեան կաթողիկոսի նոյն թւի սեպտեմբերի 24-ի<sup>2)</sup> անդրանիկ Կոնդակները և նոյն թւի մայիսի 22-ի<sup>3)</sup> և յունիսի 29-ի<sup>4)</sup> ճառերը — առաջինը՝ առաջած Թիւրքահայերի Ազգային Փազովի առաջ, երկրորդը՝ ս. էշմիածնի միաբանութեան առաջ: Սակայն, սրանց կից, կան այլ ևս նիւթեր, որպիսիք են՝ այլոց ի պատախան ասւածը, այլ և այլ պաշտօնական կարդաղրութիւններ, չրահանգներ-կանոններ և այլն:

Ստորև մենք զրեթէ շարունակ կխօսեցնենք իրեն

**Ա.**

ՊԼԱՏԻՆՈՐՄԱՆ-ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՀՏՏԵՐԸ:

iii) Η μερικές παραπομπές στην πλατφόρμα.

Իզմիրլեան Պատրիարքը գրում է՝ «իբրև եպիսկոպոսս ըստ իմ եկեղեցական ուխտին և իրքեւ Պատրիարքը ըստ սահմանադրական ուխտին, պաշտօն և պարտականութիւն ունիմ մեր Հայաստանեալց Ս. Եկեղեցւոյ դաւանութիւնն և աւանդութիւններն անխախտ պահել, հոգ տանել Եկեղեցեաց բարեզարդութեան, ամէն բարեպաշտական, կրթական, բարեգործական և այլ ազգօգուտ հաստատութեանց յարատեպայժառութեան և Ազգային ու Եկեղեցական իրաւանց անվթար պահպանութեան»<sup>1)</sup>:

Է) Տայրակեալիք ողջ շրջանը.

Իզմիրեան ընտրեալ Կաթողիկոսը բացատրում է՝  
— «Հայրապետական պաշտօնը Եթև դիրքով կը ներ-  
կայանայ:

«Առաջնորդ՝ Հայրապետը հայր է հայ եկեղեցականու-  
թեան և հայ ժողովրդեան, ուր որ ալ գտնուի:

«Երեքորդ՝ Հայրապետը պատրիարք է Ռուսիոյ հայոց:

«Երրորդ՝ վանահայրն է Մաքր-Աթոռուոյ:

“Այս երեք դէպքերուն մէջ ալ պարտաւորութիւններ ունի հանդէալ Աստուծոյ, հանդէալ տէրութեան և հանդէալ ազգին:

“Երբ պիտի պահանջեն ինձմէ, որ իմ պարտքս կատարեմ, պիտի պահանջեմ նաև որ անոնք ալ իրենց պարտականութիւնը կատարեն դէպի ինձ: Ես, տկարս, ազգին և Մայր-Աթոռոյ անդամոյ բարձր զգացման և սրտիս վրայ վստահ՝ ստանձնած եմ այս պաշտօնը: Ով որ կուզէ, որ իր ազգին պէտքերուն դարձան տարուի, հայոց վանքերը պայծառ ըլլան, ամենազօրաւոր աշակցութիւն պէտք է նուիրէ ինձ: Երբ կը թողում Պոլիսը, սկսելու ժանր պատասխանաւութիւն ունեցող պաշտօնս, այն վստահութիւն ունիմ թէ այս աշակցութիւնը պիտի վայելեմ պէտք եղած չափով: Ասիկա կը յայտնեմ ազգին առջև, եկեղեցականաց առջև:

“Եկեղեցականաց առջև, կրօնեմ, որովհետեւ կը տեսնեմ, թէ շատ անգամ չի յարգուիր այն ուխտը, որ կը կատարուի առանց ուեէ բռնազատութեան այս սեղանին առջև, ցկեանս հաւատարիմ մնալու և պահելու Հայաստանեալց Եկեղեցին իր բարձր նկարագրով”<sup>3)</sup>:

“Ազգն համօրէն և հայ հոգեորականութիւնն ամբողջ՝ պարտ են—բացատրում է նոյն ընտրեալ Կաթողիկոս Իզմիրեանը մի ուրիշ անդամ—աշակից զրանուիլ և օգնել Հայոց Հայրապետին ընդհանրապէս. իսկ մասնաւորապէս Մայր Աթոռոյ միաբանական ուխտդ, իբրև Ամենայն Հայոց Հայրապետին անմիշապէս մերձաւոր, պարտի ամեն անհամաձայնութիւն, հակասութիւն, նախանձ և այլն ի բաց թողլով միա-

սիրու և միահոգի ու համերաշխութեամբ աշակցել  
չայոց հայրապետին և կատարել իր պարտականու-  
թիւններն օրինապահութեան, պարտաճանաչութեան  
և կարգապահութեան պայմաններու մէջ։ Պարտակա-  
նու-Ռի-ննէր ընդհ. Եկեղեցւոց համար և Ռուսիոյ հա-  
յոց վարչական, դատական, կրթական, կրօնական և  
Մայր Աթոռոյ միաբանական ուխտին համար ևս պա-  
տասխանագործու-Ռի-ննէր ունիմ։ Գիտնալ պէտք է, թէ  
Ամենայն հայոց հայրապետն այս պարտականութեանց  
հանդէպ ունի և իր իշա-ու-նունէրը՝ նկատմամբ համօ-  
րէն ազգին և Եկեղեցւոյ բոլոր պաշտօնէից ընդհան-  
րապէս, իսկ Ռուսաստանի հայոց հոգեոր պաշտօնէից,  
ինչպէս և Մայր Աթոռոյ միաբանութեան նկատմամբ  
մասնաւորապէս։ Այս իրաւունքները պէտք է յարգուին  
թէ ազգէն, թէ ձեզմէ և թէ պետութենէն, որպէսզի  
կարելի լինի գործել օգտակարապէս հայաստ. Եկեղեց-  
ւոյ և պետութեան համար»<sup>4)</sup>։

Գ) Բայց Են ու գուգու Ռի-ննէրի հայոցը։

Վերջերս մեզանում, շնորհիւ ս. Էջմիածնի նախ-  
կին միաբան-վարդապետ Երւանդ Տէր-Մինասեանի  
յարուցած որբան խիզախ, նոյնքան զրաւիչ պար-  
քարի, ալդ հարցը ստացել է կրկնակի այժմէութիւն։  
Իզմիրլեան ընտրեալ Կաթողիկոսն այդ նկատմամբ բա-  
ցատրում է։  
Ականանեմ բարենորդմանց խնդիրներ, եպիսկոպոս-  
ներու և քահանաներու վերաբերեալ խնդիրներ, սա-  
կայն դատահանականական խնդիրներ շատ հետու իւ պա-  
նին Թուլլ<sup>3)</sup>։

«Գիտեմ քրիստոնէութեան թէ պատմական և թէ հաւատոյ էական սկզբունքներու մասին դիտութեան և քննութեան առաջ բերած փաստերը։ Բայց չայտարանայց Եկեղեցոյ դատահանական խնդիրներու, որոնք արդէն ժայռագծ են, ըստ կրնար դոյլել երբեմ։ հակառակ պարագալին Եկեղեցւոյ մէջ քառսալին դրութիւն մը յառաջ կուզայ և Եկեղեցին կը պառակաի ու Հայաստանեայց Եկեղեցւոյ շահերը և իրաւունքները բարոյապէս կը վտանգուի»<sup>4)</sup>։

Իզմիրլեան Կաթողիկոսը բարենորոգութիւնների հարցում, ինչպէս և առհասարակ, կողմնակից է հրապարակ ելած հարցի ազատ քննանութեան։ Սրան կից, նա այն համոզման է թէ՝ «Ականանենէրու տարբերութիւնը աւեր և աւար յառաջ կը բերէ։ Կարծիքներու աղատութիւն և տարբերութիւն կընալ լինիլ, որոնք այն կերպով իրարու հետ շփուելու են, որ կեանք և լոյս սփուեն»<sup>4)</sup>։ Ահա Իզմիրլեան Կաթողիկոսի նոյն համոզման մի այլ ձեւակերպումն ես՝ «Մեր գէմ տարիներու արհաւիրքները կան։ Կը մրգունեմ, որ ականանենէրու իրարմէ տարբեր ըլլան, սակայն չարծիքներն իրարու շփուելով լոյս պէտք է արտադրեն, լոյս՝ կեանքի առաջնորդութիւն ընելու համար»<sup>5)</sup>։

Իզմիրլեան Կաթողիկոսը պարզում է իր բռնելիք գիրքը, երբ իրէականին կը աշորդի գործնականը, հարցի պրակտիկ լուծումը ևս։

«Քանի միաքերն զբաղած են այդ խնդիրներով, առանց անոնց լուծում տալու, մենք պէտք չունինք վերստին զբաղելու անոնցմով։ Ես այն վստահութիւն ունիմ, թէ վաշ ոչ պէտք էապարտի յանուն Եկեղեցոյ՝

ոլէաւ + և գործուի մասնաբար, մենք եկեղեցականներս  
միայն չենք կազմեր եկեղեցին. բաժանում չկայ մեր  
մէջ, և եկեղեցական ու ժողովուրդ աճբարը նետաձ  
պիտի հայածեն+ Եթէ ազգն իր տեսութիւնն ունի,  
ես ալ իմ համոզումս ունիմ. մի՛ բռնադատէք զիս,  
որ անոր հակառակ գործեմ, երբ բաղաքական վտանգ-  
ներ ալ կրնան առաջ բերել:

«Գալով ժողովրդեան, հիմա կարդ մը դադափար-  
ներ տարածուած են եկեղեցիէն ուժացնելու համար  
զիրենք: Մէր այսօրուան պահանջը միջնադարեւան «էլու-  
բունիւթիւնը շեն, այլ որիսպանէական իւանիւը պահելու-  
իր ճշմարդ բարձրունեան ու վաւունեան վրայ, Աւե-  
գուրաննին հասկացնունեամբ: Կը խնդրեմ,  
որ կուսակցական հարդ շամբանուի հայ Եկեղեցականը:  
Ամեն կուսակցութենէ ազատ և վեր պէտք է մնան:  
Մեր խղիի ծախով քննենք ու հասկնանք մեր սխա-  
լլ»<sup>3)</sup>: «Մէն+ մէկ ուղղունիւն և մէկ հոսակցունիւն  
ունին+. դա՝ միայն Աւեգուրանն է: Այս եղանակով մի-  
այն կընանք մեր նուիրական կոչման բարձրութեան  
վրայ մնալ»<sup>4)</sup>: Իսկ թէ որքան ամուր է իզմիրեանն  
այդ իր վերջին շեշտով ընդգծւած ըմբռնման մէջ—  
դրա ապացուց-բանալին տալիս է նոյն Իզմիրեանի  
խորին համոզմունքը թէ՝ «Քըսպանէական իշնը պա-  
րունակում է իշ մէջ անուալայն +աղաւական գու-  
ղաժառ»<sup>5)</sup>:

Սրան կից, իզմիրեան ընտրեալ կաթողիկոսն ընդ-  
գծում է, որ «Հայաստ. Եկեղեցին միշտ ժողովրդեւան  
հասնակցունեամբ գործած է. պէտք է օգտուինք այս  
պարագայէն: Գործեր կան, որոնք ժողովրդին մաս-  
նակցութեամբ օգտակար և արդիւնաւոր կրնան լի-

նիլ»<sup>4)</sup>: Ի մասնաւորի, նա «ուրախ է յայտնելու թէ մենք ունինք այստեղ—Մայր Աթոռի միաբանութեան շարքերում—բարձր հընո-նեածը օժորեալ էրդասարդ Եկեղեցականեր, նոյնպէս ունինք նաև ծեր և գոյա-ռու Եկեղեցականեր», որ «այս երկուքին միացեալ գործունէութեամբ» կարող է «գիւրացնել» իր «Ճանր պարտականութեանց խոստումը»<sup>4)</sup>: Նա նոյնպիսի լայն թափով բացում է ասպարէզը ճանաչելով Երևան առաջ ևս. «Մեր մէջ ունինք մասնագէտներ, որոնցմէ կրր-նանք օգտուիլ մէր կրթական և տնտեսական այլ և այլ գործոց մէջ, ճշտելով անշուշտ օրէնքին ուժով անոնց մասնակցութեան կէտն ու եղանակը»<sup>4)</sup>:

Դ) Կ Ա Ռ Ո Ղ Ե Խ Ա Յ Ա Ջ Գ Ա Ր Ա Ր Ե Լ Ո Ւ Ե Ն Շ Ե Ր Ա Ը.

Իզմիրլեան Կաթողիկոսը շօշափեց այդ խնդիրը, և այն՝ իր կամքին յատուկ գիտակից յամառութեամբ: Այդ հարցը նա շօշափել է Կ.-Պոլսի ոռւստական դես-պանին ուղղած իր «խօսք»-ում և «առաջարկ»-ում, որպիսի «թղթով իզմիրլեան ասում էր դեսպանին, թէ ինքը գնում է և կարող է գնալ Պետերբուրգ որ-պէս առան ետիւնայուս, որ ընտրվել է կաթողիկոս: Բայց ինքը կաթողիկոս կը լինի, այդ պաշտօնի իրաւունք-ներն ու պարտականութիւնները կամփոփէ իր անձի վրա միայն այն ըոսէից, Երէ կը սպանայ օձու-ճը միաժամանակ»<sup>3)</sup>: Ահա այդ առթիւ իրեն ընտրեալ կա-թողիկոս իզմիրլեանի խօսքերը ևս՝ ուղղած Կ.-Պոլ-սի Աղդային ժողովին և ս. Եշմիածնի միաբանու-թեան:

«Ձեր կաթողիկոս ընտրածը բաւական չէ սեպած

իր քաղաքական վաւերացումը. ցորչափ չէ ընդունած  
վերջին կնիքը՝ օժումը, չի կրնար ներկայանալ իրեւ  
ծայրադոյն պատրիարք և կաթողիկոս»<sup>3)</sup>: «Ա. Ձենայն  
հայոց հայրապետին ընդունութիւն ու հասարապութիւնը  
հայրապետական օժումը ընդունելով կը նուիրագործուել  
և իր լրանայ, որնէ յետոյ եկեղեցոյ մէջ հայրապետէ  
անուան յիշապահուելով իր ակու»<sup>4)</sup>:

Ե) Երդուան հարցը:

Այդ առթիւ ընտրեալ կաթողիկոս իզմիրլեանը  
յայտնել է մինխոտրնախագահ Սաոլիպինին հետեւալլ՝  
—«այնտեղ, ուր երդուամը կապուած է հայոց եկեղեցւոյ և հայ քահանայի հետ, այսինքն երբ երդուամն  
կատարվում է հայոց եկեղեցում կամ մի որևէ տեղ  
հայ քահանայի ձեռքով, այդ գէպքում նա անպայման  
պէտք է հայոց եկեղեցական (գրաբառ) լեզուով կատարուի, ինչպէս կը պահանջէ հայոց եկեղեցու ծէոր  
նուիրագործուած 1836 թ. Պօլօժենիայով»<sup>5)</sup>:

Ա) Հայաստաննեայ Առաւելահան եկեղեցւոյն է.

Նախօրդիւ զծւած են Ամենայն հայոց հայրապետ  
Մատթէոս Բ.-ի պլատֆորմա-ծրագրի հիմնական կէտերը: Սակայն մեզ մնում է իւրացնել դոյն այդ  
պլատֆորմա-ծրագրի լեկավար տարրը՝ *primus movens* ը:  
«Առաջն հայոց համօքնէն կամ և ցանկայ միայն պահել կէտուննեն իր և եկեղեցոյ իրոյ և պէտառուած  
նորու: ... փափաքի փայելել զբարիս օրինաց և արդա-

բութեան»<sup>2)</sup>—կարդում ենք Ամենայն հայոց հայրապետ Մատթէոս Բ.-ի 1909 թւի սեպտեմբերի 24-ի անդրանիկ կոնդակում, ուր գրի է առնւած հայրապետական ալսպիսի յորդոր ևս՝ «Յամենայն կեանս ձեր և ի պայմանի զգրոշմ, զիրաւունս եկեղեցւոյ մերոյ և ազդի և գհնութիւնս, որ ի նախնեաց մերոց անտի, անայլայլ և անդրուսուր պահեսչիք»<sup>2)</sup>):

Նախ քան հայրապետական այդ անդրանիկ կոնդակը, նոյն միտքն ընդգծւած է իզմիրլեան ընտրեալ Կաթողիկոսի՝ 1909 թւի յունիսի 29-ին ս. Էջմիածնի միտքանութեան ուղղած խօսքում ևս՝ «Ամենա» նայադանի է օրինապահութեան և կարգապահութեան սահմանին մէջ հայաստանէայց Եկեղեցոյ և հայոց առջ գին շահէն և Ա. Ա. այց հայոց հայրապետին էլիանուն իշտուանին էլ անահանելը անարդար և աղահանելը<sup>4)</sup>):

Երկու գէպքում ևս կենդրոնական դիրք է դրած Եկեղեցուն: Եւ այդ գիծը ովայիշական է Ամենայն հայոց հայրապետ Մատթէոս Բ.-ի աշխարհայեցողութեան մէջ՝ հանդիսանալով վերջնիս ի՞սկ որ գերազոյն տարրը, primum movens-ը: Եւ այդպէս էր իզմիրլեանը՝ և իբր Պատրիարք Կ.-Պոլսի, և իբր ընտրեալ Կաթողիկոս, և իբր Ամենայն հայոց հայրապետ: Նա ուսուցանում է:

«Հայ եկեղեցին իր սրբունէան, վեհունէան և ասպոնածայնունէան մէջ պէտք է պահպանենք»<sup>7)</sup>:

«Հայաստանէալց Առաքելական ս. Եկեղեցին աղդային միութեան յօդականն է»<sup>1)</sup>:

«Մայր Աթոռը ազգին միութեան կենդրոնն է»<sup>4)</sup>:

«Որդիական երախտազիտութեամբ և պատկառուած հաւատարմութեամբ սիրեցէք զբաղմաչարչար Մալրն

ձեր ալեոր՝ զսուրբ Եկեղեցին հայաստանեաց: Սի-  
րեսշի՛ք զնոյն սէր և ընդ այլ ամենայն ազգային-ե-  
կեղեցական հաստատութիւնս զնութիրականն իւրով  
հնութեամբ և ի սփիւռս աշխարհի ցիր ու յան ե-  
ղելոյ ժողովրդեամն հայոց շնչակի կերպոնն մու-նեան  
և ուստի՝ զՄայր Աթոռն Արարատեան զկաթուղիկէ  
Սուրբ Էջմիածին: Գիտասչիք յաւետ, սիրեցեալքդ իմ  
ի Տէր՝ պատուական եղագար և լծակիցք և որդիք  
հայոց, զի ի կենացն մերոց անցելոց այսոքիկ և եթ մնա-  
ցեալ են մեզ խարիսխ ամրութեան յանվթար պահ-  
պանութիւն գոյո-նեան Եկեղեցւոյ մերոյ և Ազգի և  
ի պարծանս մեր և ի մխիթարութիւն»<sup>2)</sup>:

«Մէր Եկեղեցին և լեզուն անհրաժեշտ պայմաններ  
են (մեր) գոյութեան»<sup>3)</sup>:

«Դարերու լոյսի և խաւարի մաքառումն մեզ հա-  
մոզում է, թէ մենք պինդ պիտի գրկենք մեր Եկեղե-  
ցին, «ո՞ ապրենա, «ո՞ Երշանին լինենա:

«Տգէտ կրնդունեմ այն մաքերը, որոնք հայոց Եկե-  
ղեցու պաշտպանութեանը հակառակ կը խօսին ու  
կործանելու միտումներ կը պարունակեն: Կը վախ-  
նամ թէ այդ տաճարի վլատակներու տակ մնանք  
մենք ամենքս, հայ ազգն իր գոյո-նեածն»<sup>4)</sup>:

Է) Գ՞ ՞ Ճ Ե Լ Ա ՞ Ե Յ ՞ Ա ՞ Հ ։— Գ՞ ՞ Ճ ՞ ՞ Ն Ե ՞ ՞ Ե ՞ ՞ Ե ՞ ՞ Հ ՞ ՞ Հ ։

«Օքնա+ շունենաւը և անոր հպատակ շըւլտւը իւ  
նձանի անդէկ նաւու մը, ո՞ գոյնորիսս Ճովու մը իւ  
առաջութերի»<sup>5)</sup>—այդ համոզման էր իզմիրլեան Պատ-  
րիարքը, —մի համոզունք, որի աւելի կոնկրետ ձե-

ւակերպումը գտնում ենք իզմիրլեան Պատրիարքի անդրանիկ կոնդակի վերջում, և այն՝ այսպիսի թովիչ շեշտերօվ, որոնցով բնդգծւած է տիրաղ սահմանադրական կարգերի իմաստը ևս.

«Ի վերջով, Պատուական ժողովուրդ Հայոց, գիտեք արդէն այն նուիրական օրը, նախընթաց տարուայ Յուլիս 11-ն, երբ Թիւրքիոյ միահեծան Կալսրութիւնը Սահմանադրական կառավարութեան վերածուեցաւ և այս հիմնական փոփոխութեամբ Ազատութիւն, Եղբայրութիւն, Հաւասարութիւն և Արդարութիւն հռչակուեցան։ Ազատութիւն՝ խօսելու, գրելու, Եղբայրութիւն՝ Օսմանեան Սահմանադրական պետութիւնը կազմող բովանդակ տարակրօն և տարայեցու ցեղերուն մէջ՝ առանց կրօնի խարութեան, Հաւասարութիւն այս ամէն տարրերուն՝ օրինաց առջեւ, Արդարութիւն՝ բոլոր Օսմանցիներու համար առանց խտրական ոգւոյ։

«Սահմանադրական այս ամէն իրաւանց վայելման հետ՝ պէտք է գիտենալ որ իբրև Օսմանեան գաղտնացներ ինչպատճեր պարտականութենաներ աւ ունին։ Մենք Հայերս իբրև Օսմանեան պետութիւնը կազմող կարևոր տարրերէն մէկը, սահմանադրութեան պարզեցուած բարիքները վայելելու իրաւունքին հետ պարտաւոր ենք մէկ բաժին ինկած օրինաց սահմանին մէջ և խղնի մտօք գործադրել, պահպանելու համար Օսմանեան Սահմանադրութեան յարատե գոյութիւնը, որով միայն պիտի երաշխաւորուին ազատական սկզբունքներու անվթար կիրառումը, համերաշխ Եղբայրակցութեան մշտատե շարունակութիւնը, հաւասարութեան իրական պահպանութիւնն և

արդարութեան անվրէպ գործադրութիւնը, զգուշանալով սմին ամէն ծայրայեղութիւններէն, որոնք կրոնան վնասաբեր դառնալ և զրկել մեզ Սահմանադրութեան ընծայելիք բարիքներէն»<sup>1)</sup>:

«Իշտառանց և պայտոց» գոյն այդ ժոխադարձ կատակցման և պայմանառության հողի վրա է կանգնած իղմիրլեան ընտրեալ Կաթողիկոսը ևս՝ Ռուսիոյ հողի վրա ոտք կոխելիս անմիջապէս: Մենք արդէն յիշեցինք Օդեսսայի եկեղեցում իր պատւերը՝ գիրակցել այլող Օրէնտի առհմանները, շարունակ հալածաւ օրինական մեջոցները շրջադժուն: Այդ նոյնը կրկնում— երեքնում է իղմիրլեանն իր ամբողջ ճանապարհին— Օդեսսայից մինչև ս. Էջմիածին և վերջնում իսկ՝ միաբանութեան ուղղած իր խօսքում: Նա շարունակ պարզում-բացարում է՝ որ «հայ ժողովուրդը ունեցել է և պէտք է ունենայ միայն մի նպատակ՝ զարգանալ խաղաղութեան, կրթութեան և ուսման մէջ, պահպանելով անդրդուելի իր հանրածանօթ հաւատարիք հպատակութիւնը դէպի ուստական հղօր կայսրութիւնը և գահը և պաշտպանելով իր եկեղեցին և լեզուն՝ իրրե անհրաժեշտ պայմաններ իր ազգութեան»<sup>6)</sup>, որ «մենք հպատակ ժողովուրդ ենք, մեր պարտականութիւնն է օրինական սահմաններու մէջ մեր իրաւունքները պահպանել և այս նպատակին իրագործման պէտք է աշխատենք և ոչ ժայրայեղութեանը, այլ մեղմութեան»<sup>10)</sup>, որ «հայ ազգը իր մտաւոր-հոգեոր-բարոյական էութեամբ 1600 տարիներից ի վեր շաղկապված է անքակտելի կերպով իր ազգային-ժողովրդական եկեղեցու հետ»<sup>6)</sup>, որ «այդպիսի մի փոքր և աշխարհիս երեսին ցիրուցան եղած ժողովուրդ

պարզաբանութեամբ, խոհեմութեամբ, կշռադատութեամբ, գործել և ապրել, ծգտել խաղաղ, աշխատաւոր բարգաւառնման, հետու հաւա յախուռն և չփանքաւոր +այլերկաց, որոնք կարող են վտանգի ենթարկել նրա գոյութիւնը, և մանաւանդ գործել ուղղամտութեամբ, ամուր պահպանելով այն բոլոր պահմանները, որոնց շնորհիւ նա կարող է պահպանել իր ազգային ինքնուրոցնութիւնը, և իր իրաւունքների պաշտպանութիւնը առաջ տանել մայսն օրինական միջոցներով, օրէնքների սահմաններում»<sup>6)</sup>: Այդ նոյն ընդդում է իզմիրլեանն իր Հայրապետական անդրանիկ կոնդակում ևս՝ «Յորդորեմ զհամօրէն հոգեռականս և զժողովուրդ Հայոց, սիրով, անկեղծութեամբ և հաւատարմութեամբ կատարել զհայրականիցն պարզականութեան ձեր ըստ իրաւանց և արդարութեան և լինել միշտ օրինակէր և չարգաւահան»<sup>7)</sup>: Ի դեպ.

Օքնականութեան հարցին իզմիրլեանը դարձել է քանից լետագայիւ ևս՝ Հայրապետական Գահ բարձրանալուց ետք: Այսպէս, 1909 թւի ամառն իզմիրլեան Մատթէոս Բ. Հայրապետին այցելած Ա. Քալանթարը գրում է:

«Վեհափառը մի քանի անգամ որոշ դէպքերի առիթով կանգ առաւ իր սիրած «օրինականութեան» խնդրին: Նա տալիս էր նրան մեծ նշանակութիւն, որովհետեւ նշա մէջ մէջ ոյժ և աշունաւոր ժողովութային էր պէանուն: Օրինականութիւնը նրա ձեակերպութեամբ վերջ է դնում թիւրիմացութիւնների, որովհետեւ գծված են սահմաններ իրաւասութիւնների համար: Իւրաքանչիւրը իր իրաւունքների սահման-

ներում ազատ է գործելու: Օրինականութեան հետեւ կարելի է վստահութիւն շահել, իսկ վստահութիւնը անհրաժեշտ է բեղմնաւոր և արդիւնաւետ գործելու համար:

«Զանազան բառերով և դարձուածքներով Վեհափառը պաշտպանում էր իր հիմնական հայեցակեար և հաւատացած էր, որ օրինականութեան գաղափարի լայն ըմբռնումով կարելի էր թէ ներքին և թէ արտաքին յարաբերութիւնների մէջ մացնել ոչ միայն ծեական, այլ և էական բարւոքումներ»<sup>11)</sup>:

Իզմիրլեանին քաջ յայտնի է «հայոց ազգին և Հայապանեայց Եկեղեցին արդէ կացութիւնը»—այն որ՝ «թէ Թիւրքիոյ և թէ մասնաւորապէս Ռուսիոյ մէջ ազգային, եկեղեցական, կրթական ու կալուածական և այլ խնդիրներ կան ստիպողական կարգադրութեան կարօտ, որոնց պաշտօնական զէնը մայսն Եկեղեցականուն յանցնուած է: Թէ 1868-էն ի վեր Թիւրք կառավարութիւնը Պօլսոյ հայոց պատրիարքը Ամենայն Հայոց Կաթողիկոսի փոխանորդ ընդունած է այն պայմանաւ, որ ի Թիւրքիա և ի Ռուսիա հոգևոր գործոց մէջ Ամենայն Հայոց Հայրապետին իշխանութեան իրաւունքներն անխախտ պահուին»<sup>4)</sup>: Եւ հանուր հայեացք զցելով տիրող կացութեան ամեն մանրամասների վրա՝ Իզմիրլեանը որոշում է իր բռնելիք ընթացքի էութիւնը՝

«Իմ գոյցունեւնիւն էունիւնը լինելու է. գործենք խոնեմաբար, չղիմենք յախուռն և անկշուղատ գործողութիւններու, պաշտպանենք, այս, մեր իրաւունքները, բայց օրէնքի աահճաններուն մէջ, օրէնական ճանապարհով հայուննենք իտրդ, իւնոն և իտրդապահունիւնիւն մէջ բայց գոյցունիւն մէջ»<sup>6)</sup>:

Իզմիրլեանն աւելացնում է՝  
«Այս ուղիով պիտի ընթանայ ծեր ընտրեալ հայ-  
րապետը. Եթէ Ռուսաստանի հայ ժողովուրդը համա-  
ձայն չէ իմ այդ ուղղութեան, Ես պատրաստ եմ  
հրաժարուիլ: Ես բնաւ չեմ ձգտել ոչ պատրիարքական,  
ոչ կաթողիկոսական իշխանութեան, որովհետեւ Ես  
խորապէս համոզուած եմ, որ հայ Եկեղեցականը, նոյն-  
իսէ առաջ վարդապէտի պաշտօնուն, կարող է մեծապէս  
օգուահար և ներ հայ ժողովուրդին և Եկեղեց-ոյն՝ Ելէ հա-  
մայ անէղութօքն և անյնուիրունեամբ գործելը<sup>6)</sup>:

Իզմիրլեանի գործունէութեան էութեան լայն մաշ-  
տարով գծւած շնարար կողմն է ընդգծւած իր, ի մի-  
ջի ալլոց, ժառնականութեան հարցը նկատմամբ իւրաց-  
րած ընթացքով՝ «Յորդորեմ ի բաց թողուլ զգայ-  
թակղութիւն, զթափառելն յօտարութիւն՝ զուտիչն  
և զաւերիչ կենաց ձերոց և ընտանեաց և որդւոց  
և Ազգին իսկ գլխովին, այլ արթնութեամբ, համե-  
րաշխ և խաղաղակը ոգւով վաստակիլ ի հանոնաւո-  
րունիւն և ի բարժաւաճունուն հայրենեաց և Երիշն, «ըսց  
է+ որդիւ+ և գողագոյշիւ»<sup>2)</sup>):

Ի վերջոյ.

Վեհափառ Իզմիրլեանը՝ իր «գործունէութեան է-  
ութիւնը» գծելիս՝ գիտէր իր անհապահան ոյժերի  
շահը ևս Ահա այդ առթիւ Իզմիրլեան Պատրի-  
արքի խոսովանութիւնը՝ «ոչ մէկ կաթողիկոս և ոչ  
մէկ պատրիարք չի կրնար օգտաւէտ ըլլալ, Եթէ աշ-  
խարակիցներ չունենայ»<sup>9)</sup>...

Այդ է Իզմիրլեանի իր առաջ գծած գործունէու-  
թեան գործնական ուղին: Սրան կից, Իզմիրլեանը հա-  
մոզւած զաւանում է որ՝ «մէկ բարի օրինակն հաղար

խօս+ արժեկ հաստացնելոց»<sup>1)</sup>, և հաստատ այդ դաւանանքին և ի հետեւումն իր նրբակեաց հոգու ամենանւիրական շշնչիւնի՝ հիւսում է 1910 թւի սեպտեմբերի 24-ի Հայրապետական անդրանիկ կոնդակի այսպիսի՝ շեշտեր՝

«Մի տայլք տեղի գալթակզութեան ոչ փառասիրութեամբ և ոչ պինասիրութեամբ, ոչ շռայլութեամբ և ոչ ժլատութեամբ, ոչ անարդարութեամբ և ոչ աչառութեամբ, ոչ ագահութեամբ և ոչ արծաթասիրութեամբ, զի «արծաթասիրութիւն պատճառ է ամենալն չարեաց», ասէ գիրն. այլ եղերուք մշակ առանց ամօթոյ, հեղ, խոնարհ, բարեսէր, անաշառ և արդարասէր: Պարկեշտութեամբ կենաց ծերոց և բարեպաշտութեամբ օրինակ լերուք միմեանց և ժողովրդեանն Աստուծոյ, զի այսպէս ասէ Առաքեալն եթէ՝ «Զերեցունս այսուհետեւ աղաչեմ իբրև երիցակից և վկայ չարչարանացն Քրիստոսի... Արածեցէք որ ի ծեզ հօտդ է մի՛ զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ. մի՛ իբրև ակամայ, այլ կամաւ. մի՛ իբրև տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին»: Ա. Պետրոս Ե. 1—3: Վառեալ ի սէր սրբութեան կրօնից՝ փոյթեռանդն ոգւով ուսուցէք և բարովեցէք ժողովրդեանն Աստուծոյ զքրիստոնէական բարեպաշտութիւն և զկատարելութիւնս՝ զհաւատ, զսէր և զոյս, զգութ, զողորմութիւն, զեղավարսիրութիւն և զմարդասիրութիւն. ուսուցէք լինել արթունս, զուարժունս և պարտաճանաչս և պարտակատարս յամենայնի, և զոյն ինչ +արողէութ և «առաջանէութ հաւատացնելոց զնոյն ցուցիւն և յանձնն յերեւճ է բովանդակնեան» յերև և ի վենցապալարունեան»<sup>2)</sup>:...

ՊԼԱՏՈՐՄԱ-ԾՐԱԳՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ:  
Վերոզրեալով փակում ենք Ամենայն Հայոց Հայ-  
րապետ Մատթէոս Բ.-ի պլատֆորմա - ծրագրի հիմ-  
նական կէտերի կիրառումը և անցնում ենք վերջնիս  
գործնական հանդանանելին:

ա) Կ ա Ռ ո ւ ի կ ո ւ ա կ ա ն Ա Ռ ո ւ ն ե ր է յ ա յ շ ա բ ե ր ո ւ ս ա լ ի ս ։  
Ա յ դ ա ն հ ա յ ց լ ։

Ի զ մ ի ր լ ե ա ն ը պ ա ր զ ե լ է ա յ դ ա ռ թ ի ւ ի ր ը մ բ ո ն ո ւ մ ը  
Կ .-Պ ո լ ս ի Ա զ գ ա յ ի ն ժ ո ղ ո վ ի ա ռ ա չ ն ա խ ք ա ն Ո ո ւ -  
ս ի ա մ ե կ ն ե լ ր ։ Ն ա ա ս ե լ է ։

«Թ ի ւ ր բ ի ո յ մ է զ գ տ ն ո ւ ա ծ մ ի շ ո ց ի ս ա մ ե ն ա շ ե ր մ փ ա ք ս է ր , ո ր կ ա թ ո ղ ի կ ո ս ա կ ա ն ա թ ո ո ւ ո յ հ ե տ յ ա ր ա-  
ր ե ր ա կ ա ն խ ն դ ի ր ը ճ շ ո ւ ի , և ա ռ ա պ է տ ը ե ղ ա ծ զ ո հ ո ղ ո ւ թ ի ւ ն ն ե ր ն ը լ լ ա ն . ի շ խ ա ն ո ւ թ ի ւ ն մ ը ը լ լ ա յ :  
կ ա թ ո ղ ի կ ո ս ո ւ թ ի ւ ն ն ա ղ զ ի ն ն է , ա մ ե ն ա յ ն հ ա յ ո ց կ ը վ ե ր ա բ ե ր ի ։ Ե ւ ե ս ի ր ն շ ա ն ա կ ո ւ թ ե ա ն մ է զ ա յ տ ի պ ա-  
հ ե մ զ ա յ ն , ո ր պ է ս զ ի չ մ ե ղ ա ն չ ե մ : կ ը խ ն դ ր ե մ ս . կ ա-  
թ ո ղ ի կ ո ս ն ե ր է ն ի Ս ի ս և յ Ա ղ թ ա մ ա ր , ո ր ն ո յ ն ե ղ բ ա յ-  
ր ա կ ա ն ո ղ ի ն ո ւ ն ե ն ա ն : Ե ր բ մ ա ն ա ն +՝ «-» և «-» Ե ր բ բ ի ն +՝ Ե ր բ բ ի ն +՝ կ ը զ լ ա յ ո ւ ն ի ն +՝ ։

բ) Ե ի ւ ր ե ց է ե - Ա ր ժ ։

Ի զ մ ի ր լ ե ա ն Պ ա տ ր ի ա ր բ ն ո ւ ս ո ւ ց ա ն ո ւ մ է ։ — « Հ ս կ ե -

ցէք որ քրիստոնէական հաւատոյ աւանդն անարատ  
մնալ, հսկեցէք որ մեր Հայաստանեալց Ս. Եկեղեցւոյ  
Առաքելական կարգաց, ծխսից և աւանդութեանց մէջ  
նորածեութիւնք չապրգին, հսկեցէք որ Եկեղեցական  
ամէն պաշտամունք, Երգեցողութիւնք և սրբազն  
խորհրդոց մատակարարութիւնք կատարուին Քրիս-  
տոնէական հաւատով, յուսով և սիրով, կատարուին  
շերմեռանդն սրտիւ, կատարուին Հայաստանեալց Ս.  
Եկեղեցւոյ կարգաց և կանոնաց համաձայն...: Ուշ գր-  
րէք ամենայն արթնութեամբ և մանրախոյզ քննու-  
թեամբ ընտրեցէք ծեռնադրութեան մատչողներին,  
որ Եկեղեցասէր, անարատ և, որչափ հնար է, գիտուն  
անձեր ըլլան...: Պատկառ կենանք Եկեղեցական օրի-  
նաց և կարգաց և Ազգ. Սահմանադրութան. անվր-  
թար պահենք Ս. Եկեղեցւոյ և Ազգին անձեռնմխելի  
իրաւունքները մեր անձին իսկ զոհաբերութեամբ:...  
Ապրինք Ս. Եկեղեցւոյ համար, զի մեր փառքն Եկե-  
ղեցւոյ շինութեան մէջ է, ապրինք Ազգին համար,  
զի Ազգին պաշտօնեաներն ենք, այս կը պահանջէ մեր  
ուխտը զոր կատարած ենք առաջի Աստուծոյ, և մարդ-  
կան, երբ աշխարհէ հրաժարելով նուիրեցինք մեր  
կեանքն ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ»<sup>1)</sup>: Պատ-  
րիարքական նոյն կոնդակը պահանջ է գնում Հանա-  
կանների առաջ՝ «հնազանդիլ վանահօր և գործակցել  
անոր շանքերուն և եղբայրական սիրով ու համերաշ-  
խութեամբ աշխատիլ Ս. Մենաստանին նիւթական և  
բարոյական բարդաւաճման համար», — յանձնարարում  
է ժահանաներին՝ «պատկառ կալ Ազգային հոգեորա-  
կան վերին իշխանութեան և անոր կողմէ կարգեալ  
վերադաս պաշտօնէից» և «ճշգութեամբ ի գործ գր-

նել» իրենց «աւանդուած պատուէրներն ու հրահանգները», —յորդոր է կարդում ժողովրդին՝ «ամրապինդ պահեցէք Ձեր հայրենաւանդ սովորութիւնները, սիրեցէք Հայաստանեաց Առաքելական Ս. Եկեղեցին, որ մեր ազգային միութեան յօդակապն է»<sup>1)</sup>:

Դոյնանման շեշտեր և յորդորներ է պարունակում Հայրապետական անդրանիկ կոնդակը ևս: Վերջնում, ի միջի այլոց, կարդում էնք՝

«Եղբարք իմ և լծակիցք ի Քրիստոս և որդիք ի Տէր, ըստ ուխտին ձերոյ, որ առաջի Աստուծոյ և հաւատացելոց, և ըստ յօժարակամ յանձնառութեան՝ նուիրեցէ՛ք զանձինս ձեր ի սպաս պաշտաման Տեառն և ի գործ շինութեան Եկեղեցւոյ և Ազգի խղճի մրտոք և անկեղծաւոր հաւատառվ, և վաստակեսչի՛ք շաղկապեալք համերաշխ ոգւով և սիրով Եղբարութեան իբրև ճշմարիտ աշակերտս Քրիստոսի:...

«Տեսուչք Եկեղեցեացն Աստուծոյ, Եղբարք իմ սիրելիք, զգոյշ լերուք, մի կոչէք զմանձրամիտս և զապականեալս բարուք ի պաշտօն սրբութեան և ի ծառայութիւն Տեառն և հաւատացելոց. վասն զի այնպիսիքն զԱստուած, զպաշտօնն սուրբ և զհաւատացեալս միանդամայն անարգեն և արհամարհեն: Դայթակեցուցանեն և զժողովուրդ Տեառն և ուժացուցանեն իսկ զնոսա յԵկեղեցւոյ անտի Աստուծոյ և ի քրիստոնէական բարեպաշտութենէ: Արկանեն ընդժանր պատասխանատութեամբ առաջի Աստուծոյ և հոգեւոր իշխանութեան Եկեղեցւոյ զայնոսիկ, որք ձեռն դնեն յայնպիսեացն վերայ: Լուարուք զինչ զիրն առէ. «Ձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի դնիցես և մի կցորդ լինիցիս մեղաց օտարաց. գանձն քո սուրբ պահեսչիր»: Ա. Տիմոֆ. Ե. 22»<sup>2)</sup>:

գ) Կ ա ն + ե ց լ ե - ն ց ա ն ց « ե պ հ ա կ ա ն » - ն ի - ն ն ե -  
լ ը :

Իզմիրլեան Պատրիարքն ուսուցանում է՝  
«Ազգին կողմանէ սահմանեալ վանական կանոնաց  
անվթար պահպանման և գործադրութեան հսկել,  
իմաստութեամբ տնտեսել վանուց ելքն ու մուտքը,  
հաւատարմութեամբ պահպանել անոնց հողային և  
այլ ստացուածքներն ու գորերը, և զանոնք բարդա-  
ւան վիճակի մէջ պահել, դիտնալով որ այս առնեն  
Աղջին աշտհականուններն էն»<sup>1)</sup>:

Մենք առարաւելն ընդգծում ենք իզմիրլեան Պատ-  
րիարքի այդ շեշտը՝ ի նկատի առնելով մեղանում  
վանական հողային և այլ ստացուածքների ու գոր-  
երի նկատմամբ երբեմն-երբեմն հրապարակ ելնող  
շատիչ հոսանքներ...

՛) Կ ց ն ա կ ա ն գ ո շ ն ը :

«Հայ երկսեռ մանկուոյն դաստիարակութեան և  
կրթութեան գործ»-ը շարունակ գրաւել է իզմիր-  
լեանի յատուկ ուշադրութիւնը: «Մի խնայեք և ոչ  
մի ինչ վարժարանաց համար»—ուսուցանում է Իզ-  
միրլեան Պատրիարքն, յարակցելով և այն որ՝ «վան-  
քերն ու գալրեվանքերն սահմանուած են՝ ոչ միայն  
աղօթատեղիներ, այլ և կրթարաններ և ուսումնա-  
րաններ ըլլալու»<sup>1)</sup>: Թէ որքան պրակտիկ և միա-  
ժամանակ իդէական էին իզմիրլեանի մտապատկեր-  
ները գալրոցական գործի նկատմամբ—այդ բնորոշւած

է Իզմիրկեան Պատրիարքի՝ զպրոցական նւիրական ուխտն անմիջապէս վարողներին ուղղած խօսքերով — «Դուք, ուսուցիչը և ուսուցչուհիք, ուսուցէք Հայ երկսեռ զաւակաց իրենց մայրենի լեզուին, օսմաներէնն և այլ պէտքը ճանչցուած լեզուները։ Աւանդեցէք անոնց պատմական գիտութիւնները, իմաստափրութիւնն և այլ գիտական ամէն կենցազօգուտ գիտելիքները, ինչպէս և գեղարուեստն ու ձեռարուեստը։ Պատրիարքությէն+ Աղջին ու ընդհանուր հարդիային ընկերութեան համար ինացականութեամբ օժանուած և հասարակութեան նկարագրով առաջորած անհատնէր, ինչ որ արդէն ձեր կէտ նպատակն և նուիրական պարտականութիւնն է»<sup>1)</sup>։ Նոյն մտապատկերներին հաւատարիմ է Իզմիրկեան ընտրեալ Կաթողիկոսը ևս՝ «Կովկասի Հայոց Դպրոցների Ուսուցիչների և Վարժուհիների Միութեան» կենցրոնական վարչութեան իրեն մատուցած ուղերձի առթիւ ասածում — «Տամայն մարդկութեան մէջ կայ մարմին մը, որ կազնւացնէ մարդու. այդ ուսուցչութիւնն է։ Ոչ միայն կտայ իմացականութիւն և գիտութիւն, միտքը կրթարձրացնէ, այլ և հոգին կազնւացնէ ու կպատրաստէ ազգին համար ցանկալի պատւառը անդամներ և երկրին համար օգտակար, բարի, բաղաքացիներ»<sup>10)</sup>։ Վերօդրեալին կից՝ վերջիշենք այստեղ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Մատթէոս Բ.-ի անդրանիկ կոնդակի՝ ազգային, որպէս և տիրող պետութեան լեզուի, պատմութեան և օրէնքների ուսումնասիրութեան նկատմամբ զրի առած յորդորները ևս՝ «Յորդորեմ զծեզ նաև յատուկ խնամով ուսանիլ և ուսուցանել որդւոց ձերոց զբնիկ բարբառ մայրենի,

զպատմութիւն Ազգի և Եկեղեցւոյ մերոյ, զքրիստոնէական կրօն ըստ ոգւոյ Աւետարանի սրբոյ և ըստ ուղղափառ վարդապետութեան Եկեղեցւոյ մերոյ Հայուստանէալց»: — «Ուսարուք զլեզու և զպատմութիւն և զօրէնս Երկրին, զի պիտանիք են ձեզ յոյժ յոյժ իրրև հապատակաց, և հարկաւորք ի յաջողութիւն գործոց և ձեռաց ձերոց և աշխատութեան, ի հայթայթանս և ի խնամարկութիւն կենաց ձերոց և ընտանեաց և որդւոց»<sup>2)</sup>:

Ե) Ա. Էջ 5 ի աջնի ճի աւ բանութեան «— զդաւութից.

Սակայն հարկ է նկատել, որ ծրագրային մանրամասնութիւնների տեսակէտից ամենից աւելի ընդարձակն է ընարեալ Կաթողիկոս Խզմիրլեանի խօսքը, այն է՝ վերջնիս ս. Էջմիածնի միաբանութեան ուղղաձը: Այստեղ<sup>4)</sup> շօշափւած են՝ ՀՅՈՒԱԿԱՆ հարցը՝ ընդհանուր առմամբ՝ ծրագիր-կանոնազրութիւն՝ և, ի մասնաւորի, կրօնի թերի ուսուցումը մեր ծխական և թեմական, որպէս և պետական դպրոցներում,՝ դպրոցներին նպաստէլու հարցը, որպիսի նպատակին պիտի ժառայեցնել Մայր Աթոռի գածարանի մնացորդը, և այդ նկատմամբ՝ «Մայր Աթոռոյ ելեմութը պէտք է այնպիսի իմաստութեամբ տնտեսել, որ կարելի լինի թէ հայրապետական իշխանութիւնը իր բարձրութեան մէջ պահել, թէ Մայր Աթոռոյ անհրաժեշտ պէտքերը յանձանձել և թէ եթէ կարելի է բան մըն ալ աւելնայ աղքատիկ դպրոցներուն օգնելու համար», ծխական և այլ ինուների բարեփոխութեան հարցը որի նկատմամբ «հարկ եղածն հա-

նուր հայոց ազգին ամբողջութեան հաւանութեամբ  
և որոշմամբ միայն կարելի է ի նկատի առնել և տնօ-  
րինութիւն մը ընկել», — Մայր Ա. Առաքել և Հինգային  
Հայոցական հարցը որի նկատմամբ «Նիւթական տե-  
սակէտով ազգին վստահութիւնը ապահովելու հա-  
մար՝ անհրաժեշտ հարկ է ամեն տարի առաջնորդա-  
կան թեմերու և Մայր Աթոռոյ ելեմատական գործո-  
ղութեանց հաշիւները ներկայացնել ազգին ի գիտու-  
թիւն և ի կշռադատութիւն», — Մայր Ա. Առաքել և Է-  
կեղեցիների «Տարից և Եւց նախահաջը-ը»՝ իբր տիրող  
«կամացականութեան» բուժիչ «անհրաժեշտ» միջոց,  
և այլն... — Եկեղեցու բարչենոցունեան, Եկեղեցու-  
գործուն ժողովուների հասնակցունեան հարցերն արդէն  
յիշատակել ենք վերը՝ Ամենայն Հայոց Հայրապետ  
Մատթէոս Բ.-ի ծրագրի հիմնական կէտերը շօշա-  
փելիս...

### III

ԻՉՄԻՐԼԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ:

Իշխանութիւն Պատրիարքի 1909 թւի յունւարի 1-ի  
արդրամիկ կոնդակն իր ժամանակին, այսպէս ասած,  
լոռութեան մատնեց մեր մամուլի կողմից և լոյս տե-  
սաւ միմիայն պաշտօնական «Արարատ»-ում<sup>1)</sup>: Հստ  
երևոյթին այդ տեղի ունեցաւ շնորհիւ պատրիար-  
քական այդ կոնդակի՝ մեզանում «արևիդանողական»  
յորչորչեալ թափի: Եւ այդ՝ շատ ափսոս, որովհեաև

այդպիսով շատերի համար թերի մնաց Կ.-Պոլսի պատրիարքական գահից Երուսաղեմ աքսորւած, 12 տարի աքսորականի ժամը կեանքը վարած և ապա՝ կրկին նոյն պատրիարքական գահը բարձրացած համայն հայ ազգի ապագայ Հովւապետի խկական բնութագիրը:

Սրան կից, մենք գիտենք, որ առանձին իմն տարբերութիւն չկայ Իզմիրլեան Պատրիարքի և Իզմիրլեան Կաթողիկոսի անդրանիկ կոնդակների միջև ևս, և թերեւս այդ էր պատճառը, որ Ամենայն Հայոց Հայրապետի 1909 թւի սեպտեմբերի 24-ի անդրանիկ կոնդակը ևս, այսպէս ասսած, գրեթէ լոելեայն արձանագրւեց մեր մամուլի էջերում: Մինչդեռ վերջին տարիներս, ի միջի այլոց, մերայինների ևս ապրած երերուն օրէցօրից ետ, սպասելին էր կրկնակի լարւած վերաբերմունք դէպի Հայրապետական թափանցող հոգու և սրտի այնպիսի ցուցմունքները, որպիսիք էին, զորօր:

«Ըստ կարգի և ըստ աստիճանի պատուական պաշտօնեալք և ժողովք, խորհուրդը և հոգաբարձութիւնը և այն Եկեղեցւոյ մերոյ և Ազգի և ժողովուրդ Հայոց, որ ի սփիւռս աշխարհի ցրուեալ՝ զիտէք ապաքէն զի ազգն Հայոց համօրէն կամի և ցանկայ միայն պահել զգոյութիւն իւր և Եկեղեցւոյ իւրոյ և զիրաւունս նորա: Գիտէք, զի փափաքի վայելել զբարիս օրինաց և արդարութեան. սակայն հակառակ ցանկութեան և բղծանացս այսմիկ քանիօն ծանր պայմանք շուրջ զմեօք պատեալ նեղեն և տուայտեն զազդ մեր և Եկեղեցի: Գիտէք և քաշ, զի ազգն Հայոց, ուստերք նորա և դստերք՝ որդիք քա-

զաքայնոց և գիւղականաց կամին խաղաղ կենօք և  
անդորր մտօք վաստակիլ յուսմունս և ի գիտութիւնս  
և զարգանալ ի նոսին և ի բարոյական գաստիարա-  
կութեան, սակայն նիւթական, Փիղիքական և բարո-  
յական հարստահարութիւնք բեկանեն զաշխատու-  
թիւնս նոցա և զվաստակ, և գոգցես չանք և նպա-  
տակ հարստահարչացն է զրկել խսպառ զորդիս Հա-  
յոց ի մտացն լուսաւորութենէ և ի բարոյիցն աղ-  
նուութենէ և ի կրօնիցն սրբութենէ ի մեծ վնաս  
ժողովրդեան և Հայրենեաց:

«Եւ արդ ըստ պարտուց պաշտաման իմոյ ի նր-  
կատ առեալ զայս կացութիւն տառապեալ Ազգիս և  
ի վերայ հասեալ իրացն հանդամանաց և զօրութեանց  
աշխարհի՝ յորդորեմ զձեզ զամենեսին սիրով տառա-  
պակիր Ազգիս Հայոց, փութասչիք լուսաւորել զմիտս  
ձեր և որդւոց ձերոց, խելամուտ լինել խսկական կա-  
ցութեան Ազգին և Եկեղեցւոյ Հայաստանեաց: Փու-  
թոյ պնդութեամբ ձեռն ի գործ արկէք զամենայն  
կրթական, բարեգործական, զարհեստական և զայլ  
հաստատութիւնս, որպէս և զեկեղեցիս և զվանօրայս  
պահել ի յարատեւ և ի բարգաւաճ վիճակի: Փոյթ  
անձին ունիչիք զարգանալ նշմարիտ իմաստութեամբ,  
զօրանալ բարոյական և քրիստոնէական գաստիարա-  
կութեամբ և ամրանալ հաստատուն կամօք, և լինել  
ընտիր որդիք Ազգի Հայոց և Եկեղեցւոյ և բարի բա-  
զաքացիք Երկրին և Հայրենեաց» <sup>2)</sup>...

Մենք համոզւած ենք, որ մերայինների կացութեան  
այլ պայմաններում, քան այսօրւանն է, Հայրապետա-  
կան Անդրանիկ Կոնդակի այդ և դոյնանման հոգե-  
շունչ ցուցմունքներն ու յորդորներն Երկար խօսեց-

նել կտային՝ և վամուլը, և հասարակութեան պէս-  
պէս խաւերը...

IV

ԻՉՄԻՐԼԵԱՆԸ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՀԻ ՎՐԱ:

«Ընտրեալ Կաթողիկոս Ամենայն Հայոց Մատթէոս  
արքեպիսկոպոս Խզմիրլեան»-ն ընդունեց Հայրապետա-  
կան Օժումը 1909 թւի սեպտեմբերի 13-ին և այդ  
օրն առաջ ին անդամ բազմեց ս. Գրիգոր Լուսաւորչի  
Գահի վրա:

Համայն հայութեան զգացմունքների ճշգրիտ թարգ-  
ման հանդիսացած օրւայ մամուլը չերմագինս ողջոյն-  
ներով և սպասելիքներով հանդիպեց Ամենայն Հայոց  
Վեհափառ Կաթողիկոս Մատթէոս Բ.-ին:...

Անցան սեպտեմբերի հանդիսաւոր տօները: Կեանքը,  
իրական կեանքը մտաւ իր առօրեայ ելեհցի շրջանա-  
ռութեան մէջ: Անցան ամիսներ—մի կողմից՝ մեծա-  
մեծ լոյսերով լի, միւս կողմից՝ տոկուն, անձանծիր  
աշխատանք կլանող—գրեթէ 15 ամիսներ...

Ի՞նչ էր պատղեցնուած Ամենայն Հայոց Վեհափառ-  
Հանդատչու Մատթէոս Բ.-ին այդ ամիսների ընթացքուն:  
—Մէ ձրադիք, մէ ընդարձյակ ժողովն աչանալու ական է ի  
ծրագիք, ովն ընդգրկուած էր Հայուսուանէայց Եկեղեցու-  
և Աւրծնիւ հարազարդ վարչական, ժողովրդավարական,  
իր նախան, աշունահանադիրական և այլն ֆունկցիաների և  
բարգաւաճան գրեթէ ամեն մանրամասները:

Ահա այն՝ համաձայն իրեն Վեհափառ Հովհապետի  
գրի առածի.

«1) Մայր Աթոռոյ միաբանութեան կազմակերպութիւնը և գործունէութիւնը:

«2) Ս. Էջմիածնի սինօղի գործունէութիւնը և կազմը:

«3) Առաջնորդներու, կօնսիստօրներու, յաջորդներու, հոգևոր ատեաններու և գործակալներու գործունէութիւնը և կազմը:

«4) Թեմական վանահայրերու գործունէութիւնը:

«5) Մայր Աթոռոյ, թեմական վանուց և ծխական եկեղեցիներու կալուածոց և ամեն կարգի գոյից ընդհանուր վիճակը:

«6) Կրթական գործին նիւթական ընդհանուր վիճակը:

«7) 1905 թ. ծխական գլաքացներու բացուելէնի վեր կրթական գործին ընդհանուր վիճակը:

«8) Հնութեանց և թանգարաններու վիճակը:

«9) Կտակներու գործադրութեան խնդիրը:

«10) Մայր Աթոռոյ «Արարատ» պաշտօնաթերթի և տպարանի բարոյական և ուսումնա-դրական դերը:

«11) Մայր Էջմիածնի տաճարին հիմնական նորոգութեան, վեհարանի մը նորոգ շինութեան և այլ մասերու նորոգութեան խնդիրը:

«12) Ռուսաստանի հայոց աղդալին-հոգեորական վարչութեանց վերակազմութեան խնդիրը:

«13) Ամուսնական, ճիւղահամարական, ամուսնալուծական և այլ ամուսնական խնդիրները:»<sup>12)</sup>

Մրան կից, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Մատթէոս Բ.-ն այն՝ ըստ ամենայնի ընդդեկի «կարծիքի էր, որ նախ բան ձեռնարկել այս և այն բարենորոգութեան հայոց եկեղեցու վարչական գործերի

մէջ, անհրաժեշտ է սուսումնակիցն բոլոր այդ հարցերը, լուսաբանել նրանց անցեալ և ներկայ դրութիւնը, գործունէութիւնը»<sup>12)</sup>:

Այդպէս դրւած գործը գրաւիչ էր ինքնին իսկ՝ իբր իր տեսակի նորութիւն մեր Եկեղեցու վարչական անցեալում: Հայրապետական կորովով նշնւած համազգային գործը սպասում էր աշխատող ձեռքերի, խնամատար սրտերի, դրւած խնդիրներին գիտակից մասնագէտ ոլժերի, կարեւոր ուսումնասիրութիւնների:

Եւ, հարկաւ, այդօրինակ ուսումնասիրութիւններին, այսպէս ասած, իբր ուղեցուց գծւեցին և ապա հրապարակի վրա դրւեցին Հայրապետական Երշտակ Հրահանգներ-Կանոնները՝ 1) «Ժամանակաւոր Հրահանգ Եկեղեցական-ծխական դպրոցների մասին» (1909 թ. օգոստոսի 26<sup>13)</sup>), — 2) «Ժամանակաւոր Կանոններ վանական կալուածների կառավարութեան համար» (1909 թ.<sup>14)</sup>), — 3) «Ժամանակաւոր Հրահանգ թեմական ժողովի» (1910 թ.<sup>15)</sup>): Այդ Հրահանգներով Կանոններով լնդլայնուեց Մկրտիչ Ա. Կաթողիկոսի 1906 թւի մայիսի 10-ի «սահմանադրական» անւանեալ կոնդակով<sup>16)</sup> գծւած ժողովրդավարական սկզբունքի գործադրութեան շրջանը: Այսպէս՝ Մկրտիչ Ա. Կաթողիկոսից ժողովրդին տրւած իրաւասութեան լնտրել «թեմակալ առաջնորդներ, յաջորդներ, գործակալներ և հոգևոր վարչական հաստատութեանց պաշտօնեաներ» — կցւեց ժողովրդի մասնակցութեան իրաւունքը դպրոցական և վանական-Եկեղեցական սեպհականութիւնների կառավարութեան գործում ևս՝ ի դէմս Թէմական պատրժաճառարական Ժողովների և սրանց գործադրութեան մասին մուսական հարաբեկութիւնը:

թէ, — Թեմական Ժողովների և Թեմական Խորհրդի,  
ուն + իրենց այդէ ուրիշն է վանդակն ու  
ընտաճք եւ ֆունկցիանելով առաջն անգամ  
գոյն թիւն առան Ամենայն Հայոց Հայրապետութէունի ու  
այլու Մատթէոս Բ.-ի օրու եւ կապած պէտէ  
ժնան յառի պէտէ վերջնէ անառն հետ:

Ճիշտ է, միատեսակ չեղաւ մերայինների վերա-  
բերմունքը Մատթէոս Բ.-ի այդալիսով մեզանում՝ ի՞ն  
նորութիւն հրահանդւածի նկատմամբ: Այդ առթիւ  
այլոց կողմից դրւեցին-շօշափւեցին ոչ միայն սկզբ-  
բունքի, այլ և օրինականութեան, Ամենայն Հայոց  
Վեհափառ Հայրապետի իրաւասութեան նկատմամբ  
հարցեր, և նոյն իսկ՝ իբր «ապօրինի» յայտարարւեց  
այդ նորութիւնը: Մենք այսուեղ կանգ չենք առնի  
այդ առթիւ ծագած զուտ իրաւաբանական վեճի վրա,  
մի վեճ, որի նկատմամբ մենք, ըստ մեր նւաստ ըմ-  
բռոնողութեան, թեքում ենք, թէև երբեմն տար-  
բեր տեսակէտիյ, նրանց կողմք, որոնք «օքնական» են  
գտնում Մատթէոս Բ.-ի այդ կարգադրութիւնները:  
Ահա այդ առթիւ մի-երկու մասնամասնութիւններ.

Ս.Ենայն Հայոց Մայրաժոյն Պատրիարք-Կանոնինուն  
պալատական դիցուն ու դերը գծւած է ի վաղուց ան-  
տի՛ մեր ազգային պատմական ուրոյն իրականու-  
թիւնից: Հայոց Հայրապետը դէպ և պահապան է հա-  
մայն ազգի կրօնական, կրթական և սեպհականատի-  
րական իրաւունքների: Սրան կից, Հայոց Հայրապետի  
վրա ժանրանում է մի այլ միստիա ևս, այն է՝ շարու-  
նակ հանդիսանալ տիրող պետութեան առաջ իբր ա-  
ռաջն գիտակից պարտաճանաւ հայ +աղաւայցի: Իբր  
այդպէսին է ճանաչում Հայոց Հայրապետին ոռւս

Պետական տիրող Օրէնքը ևս՝ ի գէմս իր հարազատ  
տեկստի:

Կանոնիկոսութեան ից՝ մեզ, շնորհիւ ս. Էջմիածնի  
Գահակալի իրաւասութեան հետ կապւած պէս-պէս  
Փունկցիաների, անհրաժեշտ են խորհրդական ճար-  
ժններ՝ ի գէմս կենդրոնական ժողովների և Խոր-  
հրդդի և սրանց ճիւղաւորումների—Թեմական Ժո-  
ղովներ և Խորհուրդ, և այլն, սակայն, կրկնում ենք,  
միայն խորհրդական, որովհետև համազգային Եկե-  
ղեցու և վերջնիս կրօնական, կրթական ու սեպհա-  
կանատիրական «իրաւանց և պարտուց» դէս և պա-  
հապան աղջրնորիլ Վեհր միայն խորհրդական կարող  
է երեք պետութիւնների սահմաններում ցրւած իր  
հօտի այս-այն հաստածի հետ: Հարկաւ, այլ կլիներ  
դրութիւնը, եթէ Կաթողիկոսութեան կից գոյու-  
թիւն ունենար աղջրնորիլ Խորհրդ: Իսկ մինչ այդ՝  
մենք<sup>17)</sup> ճանաչում ենք Տի կա Տ+—Ամենայն Հայոց  
Մայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի կամքը, մեր Ե-  
կեղեցու հետ կապւած Հայական պէս-պէս մարմին-  
ների գոյութեան և Փունկցիաների բովանդակութեան  
նկատմամբ Տի Տ ՕՐԵՆ Շ Դ Շ Ե Ն Ա Շ Ե Ն Ա Յ Ն —Ամենայն  
Հայոց Մայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի in actio  
կամքը, հարկաւ՝ Պետական տիրող Օրէնքի շրջադ-  
ժում: Եւ, ի հետեւումն Հայոց Հայրապետի պաշտօ-  
նական դիրքի ու դերի այդպիսի՝ ըմբռնման, մենք  
ըստ ամենայնի միանում ենք մամուլի Էջերում վեր-  
շերս զրի առնւած հետեւեալ շեշտերին, որոնք վե-  
րաբերում են 1909—1910 թթ. Հայրապետական  
Կանոնների-Հայանգի Երևան գալու ժառանձն և սրանց  
ժողովադաշտական ակադեմիան, ի մասնաւորի՝ Թէմա-

կան առաջնորդների ընդուրութեան նկատմամբ ընդգրծ-  
ւած ուրոյնութեան [ի զէպ. թէ ի՞նչ կէտերում մենք  
չենք կարող համաձայնել այդ շեշտերի հեղինակի հետ  
—այդ եզրակացնելիք է մեր նախկին աշխատութիւն-  
ներից<sup>17)</sup>, գոյն այդ մասին մենք կխօսենք ևս մեր՝  
յատկապէս Թէմական ժողովներին և Թէմական Խոր-  
հրդին նւիրելիք աշխատութեան էշերում].—

«Մեր եկեղեցական գործերի վերաբերեալ որևէ  
չարչական կարգադրութիւններ անելու իրաւունքը վե-  
րապահված է Ջայռն Ամենայն Հայոց Կաթողիկոսին,  
իբրև նոյն վարչութեան գլխաւոր և բարձրագոյն ղե-  
կավարին. առանց նրա հաճ+ի և հաճայայնութեան ան-  
կարելի է որ և է այդպիսի վարչական կարգադրու-  
թիւն անել: Ուստի այս(պիսի վարչական կարգադ-  
րութիւնների) գէպըում ու մի կը անհրաժեշտ,  
կամ պարտաւորեցուցիչ չէ սինօդի օգնութիւնը, կամ  
աշակցութիւնը: Կաթողիկոսը կարող է պահանջել  
այս հարցում սինօդի աշակցութիւնը, կամ օգնու-  
թիւնը, կարող է և լը պահանջել:...

«Թէ ըստ Պօլօժենիալի և թէ մեր եկեղեցական  
կանոնների համաձայն՝ ամենայն հայոց Կաթողիկոս-  
ները ԱՅՆ ԵՐԱՆԱԿ ԱՆՁՆ հրահանգական և այլ  
ժամանակաւոր, կամ մշտական կարգադրութիւններ  
անելու մեր եկեղեցու բոլոր գործերի վերաբերմամբ  
առանց սինօդի և պրօկուրօրի գիտութեան (որ թոյլ-  
տւութեան բնաւորութիւն կը ստանար): Եւ այդ...  
կարգադրութիւններին և հրահանգներին ըստ վաղեմի  
սովորութեան կօնդակի ձեւ է յատկացրած»...

### Ապա՝

«Արդեօք որևէ կէտ օրէնքներից փոխպահ, կամ

խախտված է Ամենայն հայոց Կաթողիկոսի «Ժամանակաւոր Հրահանգով», կամ կօնդակով, կամ մի այլ կարգադրութեամբ:

«Ամենեին ոչ Կանոնիկուի հրահանգը, կամ այլ չարժադրութեամբ նիւները բաւորովնեն չեն վերաբերութ այս օրենքներին, որոնք անսասան են ճնուած: Նրա կարգադրութիւնները վերաբերում են այն և այն առ կամ ճշնապներին, երբ Ամենայն հայոց Կաթողիկոսը ինքը թեկնածու է որոնում ու ընտրում և վճռում է ներկայացնել Կայսրի հաստատութեան:

«Այդ ոչ ու չեն առ կարգադրութիւններում Ամենայն հայոց Կաթողիկոսը լիովն աղաք է թեկնածուներ ընտրելու համար սահմանել այն ձեր, որը նա համապատասխան է գտնում մեր եկեղեցու դարաւոր կանոններին և նպատակայարմաք ժողովրդի շահերի տեսակէտից, ալսինքն ընտրական առաջնորդութիւն սահմանելը փոխանակ նախկին նշանակովի առաջնորդութեան:... Այդ փոփոխութիւնը... չէ հակասում պետական օրէնքին:... ոչ մի տեղ ամբողջ «Պօլօժենիկում» արգելը չէ դրված Ամենայն հայոց Կաթողիկոսին սահմանել այնպիսի նախադատական ընդունական ճարմներ, որոնք կոչված են իրանց ընտրական ձայնով Կաթողիկոսին մատնացոյց անելու այս կամ այն թեկնածուին, եց Կանոնիկուր այս խնդրում յանկանած է իր հօտի ձայնին լսել և նրա հետ ձեռն ի ձեռն գործել»...

Ապա՝

«Ժողովներին ականոնութը ճազական չէ սահմանադրութամբ Կաթողիկոսին մատնացոյց անելու այս կամ այն թեկնածուին, եց Կանոնիկուր այս խնդրում յանկանած է իր հօտի ձայնին լսել և նրա հետ ձեռն ի ձեռն գործել»...

մալոյծ է անում բոլոր գոյութիւն ունեցող խորհուրդներն և ժողովները, այլ մեղաւորներին կարող է ենթարկել ամենախիստ պատասխանատւութեան, օրինական դատի:

“Ոչ մի ծեռնթափութեան և չէզոքութեան մասին այստեղ խօսք անգամ չէ կարող լինել:

“Այս, ինչ որ առաջ հօնախորացիան էր անում, այսօր նրա դեղը—այն էլ գլխաւոր կետերում—անում է Աւմական խորհութեան որին նախագահում է ընտրովի թեմական առաջնորդը: Գործադրութեան նորից ճնում է Աւմական առաջնորդը, սակայն գործը աւելի խելացի կերպով, աւելի բամակորմանի ուսումնասիրած է լինում: Ես չեմ հասկանում, թէ ինչու ընտրական ըսկրգունքի գործադրութեան ժամանակ Կանոնինուն վեպոն չէզոքանում է:

“Կանոնինուն ոչ մի դեպիում աղաքատոք չէ հնապահութել որևէ ընդուն-Աւմական անձեն չի ընդուն-Ավելի նա իրաւունք աւահանել և պահանջել նոր ընդուն-Ավելին: Այսպէս Կանոնինուն իրաւունքը, իբրև եկեղեցու պետի, ան անհան է: Միայն նա չէ հարու էր հարգաւունենալ ինչապէնել ընդուն-Ավելինը: Սրանում է տարրերվում օրինականութիւնը բռնապետութիւնից, երբ պետը դառնում է և պետ և գործադրող պաշտօնեայ:

“Ոչ, կաթողիկոսական իրաւունքները ոչ միայն չեն նսեմանում և կաթողիկոսական գործունեութիւնը սահմանափակվում ժողովրդական սկզբունքի գործադրութեան ժամանակ: Կաթողիկոսը ոչ միայն ժողովրդից չէ խաբվում, այլ ընդհակառակ Կաթողիկոսի խելացի և ժողովրդասեր կարգադրութիւնները աւելի

լւա և անկեղծօրէն են գործադրվում։ Կայլողինուը  
այստեղ միանուն է իր ժողովրդի հետ և գործուն նրա  
աջակցութեան մասունքը՝ 18)։ Եւ «Նոր ուղղութեան (Թե-  
մական Ժողովների և Թեմական Խորհուրդների) նա-  
խաձեռնող երթէք մտածել անգամ չէ կարող, թէ  
դրանով նսեմանալ կամ նուազել կարող են իսկու-  
ռելուական իրաւունքները։ Նրանք՝ այդ իրաւունք-  
ները հանուն են իրանց առելը, բայց իրանց ձևը՝ ճ-  
շնապիրի հիմնարկութիւնների և հաստատու-  
թիւնների միջոցով, ուր հասարակական շահը գե-  
րակալութ իւ լինի հասարակական շահեցի և կա այս լ-  
յական-հաեցի»<sup>19)</sup>...

Ի՞նչ և է: Այլ տեղում աւելի մանրամասն կանդ առաջ լինելով այդ ամեն, որպէս և սրանց հետ կապ- ւած ուրիշ հարցերի վրա <sup>17)</sup> , այստեղ մենք կբաւենք դնելով մեր համապատասխան թէ՝ ինչպէս միշտ՝ նո-

յու-Ռի-Շների շրջանում, այս անգամ ևս՝ Թեմական Ժողովները և Թեմական Խորհուրդը — Մատթէոս Բ. Կաթողիկոսի օրօք գծւած այդ ըստ ամենայնի՛ ողջունելի նորութիւնները — կամրանան իրենց շուրջը ստեղծւած հակահոսանքների հանդիպումներում, պայքարում, և կհանդիսանան ապագայում՝ իբր ակտիւ ամրակուռ զործոններ մեր ազգային եկեղեցական-կրթական-տնտեսական կացութեան<sup>17)</sup>...

Մի նորութիւն ևս, որը նոյնպէս կապւած պիտի մնայ Մատթէոս Բ. Կաթողիկոսի անւան հետ: Խօսքս Մայր Անուշի և Թէհական Հաստատութիւնների և «Հական հարաբեկան նախահաշվեների հրատարակման հարցի մասին է: Մակայն այստեղ թող խօսի Մատթէոս Բ.-ի օրօք լոյս տեսած և վերջնիս՝ «կը հաստատենք և կը հրամայենք ի զործադրութիւն և ի տպագրութիւն» մակադրութիւնը կրող՝ «Նախահաշիւ Մայր Աթոռի և Թեմական Հաստատութիւնների 1910 թ.» վերատառութեամբ հիւսւածքին կցւած պաշտօնական բացարութիւնը: Վերջնում կարդում ենք՝

«Մայր Աթոռը մինչև 1909 թուականը իւր ներքին հաստատութիւնների համար միշտ կազմել է նախահաշիւ գլխաւորապէս աչքի առաջ ունենալով ծախուց յօդուածները, առանց մուտքի յօդուածների, թէև միշտ էլ զգալի է եղել այդ բացի անհրաժեշտութիւնը: Նոյնպէս և Թեմական հաստատութիւնների համար 1907 թուին ծախուց որոշ չափ (շտատ) նշանակելով, մուտքերը մնացել են անուշադիր: Սինօդը ըստ հրահանի Վէհափառ Հայրապետի յանձնարարեց իւր ստորագրեալ բոլոր հաստատութիւններին ներկայ 1910 թ. համար նէ ճակա և նէ եւկա հարաբեկան

Նախահաշը՝ պատրաստել, որ քննութեան առնելով  
և ինչ-ինչ փոփոխութիւն մտցնելով առաջարկեց Նո-  
րին Վեհափառութեան ի հաստատութիւն, որպիսին  
այժմ հրատարակւում է ի գործադրութիւն և ի գի-  
տութիւն»)՝<sup>21)</sup>

Հարկաւ, շնորհիւ 1910 թւից ի վեր հրապարակի  
վրա դրւելիք Մայր Աթոռի և Թեմական Հաստա-  
տութիւնների «կատարեալ նախահաշչիւ»-ների, մի  
կողմից, ինչպէս ասել ենք իր տեղում—1910 թւի  
«նախահաշչին» նւիրածո յօդւածում <sup>22)</sup>), դիւրութիւն  
է տրւելու Մայր Աթոռին՝ «գիտենալ իր ստանա-  
լիքի յօդւածները ևս, և որոշ հաւասարական-նիւն  
պահպանել իր ել և մուտքի մէջ՝ անելով կարելի և  
անհրաժեշտ տնտեսութիւնները և ազատելով գան-  
ձարանը ցալսօր քրոնիկականի յատկանիշը կրող նո-  
րանոր դեֆիցիտներից և այլ անակնկալութիւններից։  
Միւս կողմից, դրանով դիւրութիւն է տրւած հա-  
սարակութեան՝ մօտիկից իրազեկ լինելով իր նւիրա-  
կան վայրի նիստ ու կացին՝ գիտակցաբար վերաբեր-  
ւել վերջնիս նկատմամբ՝ իր իրաւունքներին և պար-  
տաւորութիւններին։

Կրկնում ենք՝ այդպիսով Մայր Անոնի է -  
թշնամիան հասարակությունը կազմությունը է առաջարկութան  
նախանձակալ է - ներկի երեսն գույնը - այն-  
+ ան ժանայակալ է - և հանդիսադրությունը հանդի-  
մասար քառարը պիտի կապը - աշխատ ճնապա Աճենացն  
չայցը հայրապետությունը Բարելի բարելի անառն  
հետ...

Կան մի շարժ նորութիւններ և լուսապէս էին — չայ-  
րապէտական Դիւանական Խորհուրդը, — ո. Էջմիածնի

Ուսումնաբանական թանձնաժողովը (վերջինս, ինչպէս յայտնի է, գոյութիւն ունէր Մակար Կաթողիկոսի օրօք ևս), — Հայրապետական պատւէրը՝ աշխարհիկ լեզու բանեցնել Հոգևոր Հաստատութիւնների ամեն գրութիւններում (Գրաֆառը պահպանւեց միայն Հայրապետական կոնդակների համար.—ի գեալ, յայտնի է, որ Մկրտիչ Ա. Կաթողիկոսի 1906 թւի մայիսի 10-ի «սահմանադրական» անւանեալ կոնդակը գրւած է աշխարհիկ լեզով), — Հայրապետական պատւէրը՝ այլուր սփռած մեր եկեղեցիներում և վանքերում գտնւած ձեռագրներն ուղարկել ս. Էջմիածին՝ Մայր Աթոռի մատենադարանում «անկորուստ» պահելու համար,— Մկրտիչ Ա. Կաթողիկոսից հաստատւած 1907 թւի «Ծխական Կանոնադրութեան» վերաբննութեան ձեռնարկելը, — Եկեղեցական-ծխական դպրոցների ժամանակաւոր-փորձնական ծրագիրը (վերջնիս գործադրութեան մէջ եղած ձեռագիրը վաւերացրւած էր գեռ Մկրտիչ Ա. Կաթողիկոսից, իսկ Մատթէոս Բ.-ի հրամանով այն վերամշակւեց և 1910 թւին տպագրւեց Մայր Աթոռի տպարանում՝ «Հայոց Եկեղեցական դպրոցների ուսումնական ծրագիր. Տարրական դասընթացք» վերատառութեամբ), — Հոգևոր հաստատութիւնների վարչական գործառնութիւնների կանոնաւորումը՝ խնդիրները մերժաւո՞ր իշխանութեան միջոցով հասցնելը բարձր և բարձրագոյն իշխանութեան:

Այստեղ լիշտապահելու է ևս մեր Եկեղեցական-ծխական դպրոցների՝ Կովկասի Փոխարքայի մշակւած ծրագրի մանրազննին ուսումնասիրութիւնը, որպիսի ծրագրի առթիւ իր նկատողութիւնները Մատթէոս

Բ.-Ն յանձնեց Փոխարքային 1910 թւի ամառ, Մըց-  
խէթում կայացած տեսակյութեան ժամանակ:

Ապա. Մատթէոս Բ. Հայրապետը շարժեց՝ — Մայր  
Աթոռի կալւածների՝ ըստ քանակի և տարածութեան  
որոշականացման — դրի առնման, որպէս և Մայր Ա-  
թոռի էջմիածնապատկան հողերի ոռոգման հարցը,  
— նոր Վեհարանի շինութեան հարցը, — Մայր Աթոռի  
վերանորոգութեան հարցը, և այլն, և այլն:

Եւ դեռ որբան հարցեր նախագծաւծ էին՝ Թէ-  
մական հոգեոր Դպրանոցների համար կանոնադրու-  
թեան նախագծի մշակումն (այդ հարցով պատւէր  
ունէին զբաղւելու Թէմ. Դպրանոցների ուսուցչա-  
կան և հոգաբարձական խմբերը), — Գէորգեան հոգեոր  
ձեմարանի վիճակի բարւոքման հարցը (այդ հարցով  
պատւէր ունէր զբաղւելու Գէորգեան ձեմարանի ու-  
սուցչական խումբը, որի մշակելիք ուսումնական և  
վարչական կանոնադրութեան նպատակ էր ցուցւած՝  
տալ ձեմարանի Լսարանական բաժնին բարձրագոյն  
կրթարանին վայել զիրքը), — վանական (ս. էջմիածնի  
միաբանութեան) կանոնադրութեան մշակումը, — Հո-  
գեոր Հաստատութիւնների բեկիզիան լուրջ հիմունք-  
ների վրա դնելու խնդիրը, — բոլոր դպրոցները կա-  
նոնադրական-ծրագրային միակերպութեան ենթար-  
կելու խնդիրը, — դպրոցների դրամական ապահովու-  
թեան հարցը, — կրօնի գասաւանդութեան հարցը թէ-  
մական, ծխական և պետական միջնակարգ դպրոցնե-  
րում, — ուսուցչական կենսաթոշակի հարցը, և այլն,  
և այլն:

Սակայն մենք սպառած չենք լինի Ամենայն Հայոց  
Հայրապետ Մատթէոս Բ.-ի ծրագրածի գործնականը,

Եթէ յիշատակելու չլինենք այստեղ հետևեալ երկու փաստերը: Խօսքս Մատթէոս Բ.-ի՝ բժշկապետ Աւետիք Բաբայեանին վերջնիս՝ «Եկեղեցական առողջաբանութիւն» վերատառութեամբ աշխատութեան <sup>23)</sup> առթիւ գրած նամակների և 1910 թւի ապրիլի 7-ի № 886 կոնդակի մասին է:

Նախ՝ առաջն գաստը.

Բժշկապետ Ա. Բաբայեանն իր՝ «Եկեղեցական առողջաբանութիւն» աշխատութիւնը նւիրել է «Սրբազնագոյն Կաթողիկոսին Ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարքին Ա. Էջմիածնի»: Այդ աշխատութեան «Վերջաբան»-ում տրւած են ամբողջ գործըն ամփոփող ուշագրաւ թեղերը ևս: Սրանք են՝

«1) Ոչ մի հասարակային հաստատութիւն, լինի նա աշխարհային թէ հոգեւոր կամ կրօնական, իրաւունք չունի իր հիմնած կամ հիմնելի կարգերով մի մազաչափ անդամ վնասելու հասարակաց առողջութեանը:

«2) Բարեփոխութիւնների չենթարկւող, անշարժ մնացող եկեղեցին գատապարտւած կը լինի բարոյական խմորման և փուռմի. ինչպէս անշարժ կանգնած լիճը, որի մէշ բարձր կազմ ունեցող կենդանիները չեն կարող ապրել, տեղի աալով մակարոյցներին և ստորագաս վնասաբեր մանրէներին, որոնք և հոտեցնում են լիճը:

«3) Մարգարէնները, առաքեալները, եկեղեցու նախկին սուրբ հայրերը եկեղեցական օրէնսդրութեանց և կարգերի հիմքեր գնելիս՝ շատ անդամ զեկավարւել են բացի բարոյականը՝ նաև իրանց ժամանակի առողջապահական սկզբունքով, ստէպ փոխելով հինը, որի վնասակարութիւնը ճանաչւել է:

“4) Այժմեան մեր Եկեղեցական վարիչները, սուրբ  
հայրերի օրինակին հետևելով, պէտք է Եկեղեցական  
կարգերը յարմարեցնեն արդի առողջաբանութեան հիմ-  
նական և անհերքելի պահանջներին, որոնց դէմ չէ  
Քրիստոսի բուն վարդապետութիւնը:

“5) Այս կարեոր բարենորոգութիւնները, որոնք  
չեն խախտում մեր Եկեղեցու գաւանաբանական սկզբ-  
րունքը, ոչ թէ վնասելու են մեր ազգային Եկեղեցու  
ինքնուրոյնութեան, այլ ընդհակառակը՝ պիտի աւելի  
մեծ փայլ տան այդ ինքնուրոյնութեանը, հաստա-  
տելով նոյն իսկ նրա գոյութեան իրաւունքը:

“6) Այս ամենի հիման վրա մեր ազգային Եկեղե-  
ցու կենսունակութեան թշնամին է՝ լիակատար ան-  
շարժութիւն և անփոփոխ կարգեր քարոզողը, և ոչ  
թէ բարեփոխութիւններ պահանջողը:

“7) Այդ բարենորոգութիւնները պէտք է լինին  
հասարակութեան զարգացման աստիճանին համեմատ,  
այսինքն հասունացած, և ոչ թէ անհեռատես ոս-  
տումներով, ինչպէս էին նախկին Կաթողիկոսու-  
թեան վերջի տարիների միերկու կօնդակները, ինչ-  
պէս է քարոզելլ՝ թէ Եկեղեցիների զանգահարու-  
թիւնը հակաքրիստոնէական է, ամեն սրբատեղի և  
ուխտագնացութիւն աւելորդ է...”<sup>23)</sup>:

Բժշկապետ Ա. Բաբայեանը, հարկաւ՝ նախօրօք  
ստանալով անհրաժեշտ թոլլտութիւնը, հրապարակի  
վրա դրեց Մատթէոս Բ.-ի՝ նոյն իր «Եկեղեցական  
առողջաբանութիւն» աշխատութեան առթիւ իրեն  
ուղղած նամակների մի քանի կտորները: Սրանք յոյժ  
կարեոր են, որովհետեւ նախ՝ պարզում են Մատթէոս  
Բ.-ի վերաբերմունքն Եկեղեցական առողջաբանութեան

այնքան կարգինալ և անհրաժեշտ հարցի նկատմամբ,  
և ապա՝ միանգամ ևս ընդգծում են նոյն Մատթէոս  
Բ.-ի վերաբերմունքն Եկեղեցական բարենորոգութեան  
հարցի նկատմամբ առհասարակ:

Սակայն, նախ քան Ա.մենայն Հայոց Հայրապետ  
Մատթէոս Բ.-ի բժշկապետ Ա. Բաբայեանին ուղղած  
նամակներին անցնելը, հարկ է ցուցել, որ «ամէն ա-  
ռողջապահիկ կանոնաց» հետևելու անհրաժեշտու-  
թիւնն ընդգծւած է Իզմիրեան Պատրիարքի 1909  
թւի յունարի 1-ի անդրանիկ կոնդակում ևս: Այս-  
պէս, վերջնիս որոշ հատուածում կարգում ենք՝ «Քա-  
րողեցէք և ուսուցէք ժողովրդեան ի գործ դնել այն  
ամէն միջոցները, որք կպահպանեն զիրենք բոլոր հո-  
գեկան և մարմնական վնասներէ, ուսուցէք աշխա-  
տութիւնն և անոր օգուտներն և ծուլութեան աղտե-  
ղալի հետևանքները»<sup>1)</sup>: Բայց աւելի պարզ և ման-  
րամասն արտայալտել է այդ հարցի նկատմամբ Իզ-  
միրեան Կաթողիկոսը բժշկապետ Ա. Բաբայեանին  
ուղղած նամակներում: Սրանցում, ի միջի այլոց, կար-  
գում ենք՝

««Զեր... «Եկեղեցական առողջաբանութիւն» անուն  
աշխատութիւնը ստացայ և ուշադիր հետևեցայ ձեր  
աշխատութեան ամեն մէկ տողին: Անվիճելի նշմար-  
տութիւն մըն է այսօր թէ՝ սխալ ըմբռնուած քաղա-  
քակրթութիւնը մէկ կողմէն, տղիտութիւնը, քարա-  
յած սովորութիւններն և նախապաշարումները միւս  
կողմէ բարոյից անկման, կրից անզսպութեան տեղի  
տուած՝ շարք մը տարափոխիկ հիւանդութիւններ,  
մանաւանդ վատ ախտը գոգցես փայփայանքով կը սր-

նուցանեն և ահռելիօրէն կը տարածէն։ Գիտական աշխարհն այս ողբալի վիճակին ի դարման, մանաւանդ այնքան ախտատարած մանրէներու գոյութեան հաստատուելէն ի վեր, առողջապահիկ պայմանները մեծ խնամքով կը մշակէ մարդկային սեռը այլասերումէ, ֆիզիքական քայլայումէ և նոյն իսկ տարաժամ մահուանէ փրկելու համար։

«Առողջաբանական գիտութեան և առողջապահիկ պայմաններու շարքէն գուրս պէտք չէր մնար և եկեղեցական առողջաբանութիւնը։ Ասի մշակելու առաջնութեան պատիւր... ձեզ կը պատկանի, ինչ որ մեծ և կարեոր պակաս մը կը լեցնէ մեր այնքան խրնամքի կարօտ կեանքին մէջ։ Կը շնորհաւորեմ ձեզ և ամեն յաշողութիւն կը մաղթեմ»։

«Այս առաջաբանից յետոյ—ասում է բժշկ. Ա. Բարյեանը—Վեհափառ հայրապետը մի առ մի թւում է զրբիս մէջ պահանջված նախ՝ այն բարեփոխութիւնները, որ այժմէն իսկ աստիճանաբար կարող են գործադրվել ըստ իր բարձր հայեցողութեան։ Ահա այդ կէտերը։

«1) Եկեղեցիներում նստարաններ և աթոռներ ժողովրդի համար զնելը. 2) Եկեղեց. երաժշտութեան կարգաւորումը. 3) Եկեղեցու մէջ օդափոխիչ գործիք հաստատելը. 4) Զմեռնային ժամանակ եկեղեցիների շեռուցումը (տաքացնելը). 5) Ախտավարակ երկսեռ անձանց մինչև առողջանալը պսակման արգելը. 6) Գլխազնի և գրամօժափ չնշումը. 7) Պահեցողութեան կամ պասի առողջաբանական տեսակէտով բացատրվելը. 8) Ծննդկան մայրերի 8—9 օրից անկողնից ելնելը և «բառասունքի» պահեցողութիւնը. 9) Գերեզ-

մաններ ծառազարդելը. 10) Գերեզմանների շուրջ  
ծառաստանով թումբ շինելը. 11) Ննջեցելոց մար-  
մինների լուածքն առողջապահիկ պայմանաց համա-  
ծայն կատարելը. 12) Ննջեցելոց թաղումը երեք օ-  
րով լետաձգելը. 13) [Դրա համար] գերեզմանների մէջ  
մատուռ ունենալու պէտքը. 14) Բարեւական և մե-  
ռելահամբոյրի չնշումը. 15) Մեռելահացի՝ բելեխի  
չնշումը. 16) Ննջեցելոց երեսկալի և նրա յարակից  
կտաւեղէնների չնշումը կամ ապանեխման (զէզին-  
ֆէկցիալի) ենթարկելը. 17) Մեռելական մետաղեա,  
խնչպէս և շինժու ծաղիկներով (որոնք պահպում են  
ուրիշների էլ գործածելու համար) պսակներ զնելու  
նորամուտ սովորութեան աւելորդութիւնը և վնաս-  
ները ժողովրդի համար. 18) Ննջեցեալները դադաղա-  
կառքով փոխանակ ուսերի վրա՝ գերեզման փոխադ-  
րելը. 19) Միենոյն մեռելաղագաղի հասարակաց գոր-  
ծածութեան համար ամեն անդամ ապանեխման են-  
թարկելու կարիքը. 20) Մեռելաթաղթահանակից կառ-  
քով գերեզմանոց գնալու թուլառութիւնը:

«Այս և ասոնց նման կէտերը կամ բարե-  
փոխութիւնները չայսատանեալոց Եկեղեց-  
ւոյ հայեացքով կանոնական արգելը մը  
չունին և կրնան այժմէն գործադրուիլ  
աստիճան աբար՝ ուր որ յարմարութիւն և  
միշոցներ կան:

«Վեհափառ չայրապետն իր երկրորդ նամակում  
բարեհանել է գրել.

«Կարելի էր եկեղեցիները ելեքտրական կանթեղ-  
ներով լուսաւորելը նոյն այդ 20 կէտերու կարգն անց-  
նել, ինչ որ սակայն մոմավաճառութենէ գոյացած շա-

հուն կը բաղխէր, զոր իրաւամբ դիտած էք ձեր «Ե-կեղեցական առողջաբանութեան» մէջ։ Այսուամենայնիւ՝ որտեղ որ յարմարութիւն ունին և կը խնդրեն՝ կը թոյլատրուի, ինչպէս թոյլատրեցինք Սիմֆերօպոլի եկեղեցին, միայն տանարներու բեմի կերոնները և մոմերը պահելով։

«Դարով իմ գրքիս մէջ շօշափված աւելի ծանր խնդիրներին և առողջապահական տեսակէտով բարեփոխելու պահանջներին, Վեհափառը այդ կարգի մէջ դրել է հետևեալ կէտերը։

«1) Դիակիզումը. 2) Ա. հաղորդութեան մասնակցելու մատակարարութեան եղանակի փոփոխութիւնը. 3) Կուսակրօնութեան և քահանայից կրկնամուսութեան խնդիրները. 4) Փեսացու և հարսնացու անձանց նշգութեամբ տարիքի որոշումը. 5) Ազգակցական, խնամէական և կնքահայրական նիւղահամարի փոփոխութեան խնդիրները. 6) Ամուսնալուժման խնդիրը կանոնական սահմաններով ընդլայնելը։

«Այս և այլ ասոնց յարակից առողջաբանական պահանջները, որոնց մէջ ուշադրութեան արժանի աւելի ծանր խնդրներ ալ կան, Տայաստանեալց ընդհանուր Եկեղեցւոյ իրաւասութեան կը վերաբերին։ Այս կարգի խնդիրները բարեփոխելու, լուծելու և ի նորոյ կանոնելու հեղինակութիւնը՝ հայաստանեալց ընդհանուր համազգային եկեղեցական ժողովին կը պատկանի։

«Քաջ զիտէք արգէն, թէ միայն քաղաքական սիրող հանգամանաց և պատճառներու հետևանոք՝ 6 դարէ ի վեր կարելի եղած չէ համազգային եկեղեցական ժողով գումարել։ Այս ժողովի գումարման պէտքը սակայն այլևս անհրաժեշտ դարձած է. ուստի



Թիւրքիոյ հայոց արդի կացութիւնը աստիճան մը  
անդորրանալէ և Խուսիոյ հայոց կարգ մը խնդիրները  
յարդարուելէ յետոյ՝ պիտի ձեռնարկենք այդ լնդ-  
հանուր ժողովի գումարման գործին. կը յուսամ թէ  
լաշողինք»:

«Հետեւեալ տողերով Վեհափառը վերջացնում է իր  
նամակը:

««Նուիրական պարա կը համարիմ այժմէն հաս-  
տատապէս յայտնել և յայտարարել, թէ Հայաստա-  
նեաց Եկեղեցւոյ հաւատոյ դաւանութիւնն  
ու վարդապետութիւնն ամեն պարագայի  
մէջ անձեռնմխելի պիտի մնայ, ինչ որ ան-  
պայման կը պահանջէ անոր գոյութեան  
եւ ինքնուրոյնութեան անխախտ պահ-  
պահանման բացարձակ պէտքը»»<sup>24)</sup>...

Այժմ անցնենք վերը ցիշածս Երիրադ ժամադին—Ա-  
մենայն հայոց Վեհափառ Կաթողիկոս Մատթէոս Բ.-ի  
1910 թ-ի առյօն 7-ի № 886 հոնդակին:

Վերջինս ուղղւած է Թիւրքահայոց այսօր հրա-  
ժարեալ Պատրիարք Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեա-  
նին և վերաբերում է «Գոյն և բացի» չարաբաստիկ  
հարցին: Հայրապետական այդ, ըստ մամուլի հշգրիտ  
բնորոշման՝ «նշանաւոր»<sup>25)</sup> կոնդակում, ի միջի ալոց,  
կարգում ենք՝

«Թէպէտ և Մենք ցարդ չունիմք պաշտօնական տե-  
ղեկութիւն ինչ զյարուցեալ խնդրոյդ, այլ քանզի զար-  
դիս խնդիրս եղեալ է ի հրապարակի և թերեւս կան-  
խեսցի լուծումն կամ տնօրէնութիւն անբաւարար յա-  
ղագս ս. Եկեղեցւոյս Հայաստանեաց, ընդ հովանեաւ-  
որոյ կայ մնայ ի սկզբանէ անտի քրիստոնէութեան

այսր ամբողջութիւն Ազգիս, հարկ անհրաժեշտ վարկանիմք՝ իբրև հայրապետ լրութեան ազգիս, այսու Կոնդակաւ Մերով յանձն առնել Ամենապատութեան Զերում անօրինել արդելու յեկեղեցիս մեր զգումարումն ժողովոց (միթինկաց), որք ունին գքաղաքական բնոլթ և հային ի խնդիր ազգի ազգի քաղաքական հոսանաց և կուսակցական տեսութեանց կամ ուղղութեանց... Դիտեն Ամենապատութիւն Զեր և պատուարժան անդամք Կրօնական և Քաղաքական ժողովոց, Եթէ ա. Ելեղեցին հայոց Նկ' ասպարաշ' և բնէ ասպարաշ' և կուսակցական բնութանը նաև ապարաշ' և արոց ժագին դժգոհութիւնք, տարածայնութիւնք, որով և նսեմանայ Կրօնական վսեմ նշանակութիւն նորա յաչս հաւատացեալ ժողովրդեան մերոյ և նոյն իսկ օտարաց: Սրբազն պարտի՛ չն ամենեցո՞ն՝ յարդել պարական պայացնո՞ն հաւատացելոց. ահա այս է առողջ և ուղիղ ակնել ակնել առաջունուն խոնճի»<sup>21)</sup>:

Ասացի՝ «նշանաւոր» էր Մատթէոս Բ.-ի այդ Կոնդակը: Այս: Եւ մեր արդի երերմնաշատ օրերում մեզ հարկ անհրաժեշտ է կրկին և կրկին ընթեռնուլ և իւրացնել Ամենայն հայոց Վեհափառ հայրապետի այդ Կոնդակի քաղածս վերջին տողերը՝

«Սրբազն պարտիք են ամենեցուն՝ յարդել զնուիրական զգացմունս հաւատացելոց. ահա այս է առողջ և ուղիղ սկզբունք աղաքունք խոնճի»...

Ինչ և է: Բաւենք վերոգրեալով...

Ահա այդքան՝ բառիս բուն իմաստով լայն հորիզոններ գծեց, եռուն, նշանակալից և արդասաւոր գործունէութիւն ցուցեց ս. Գրիգոր Լուսաւորչի

Գահի վրա հազիւ մի տարի երեք ամիս բազմած՝  
ՄԱՍԹԵՈՍ ԵԱՐԱՅ ԵՒՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ  
ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՈՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈ-  
ՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ  
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱ-  
ԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՈՒՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱ-  
ԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԵ  
ԷՋՄԻԱԾՆԻ:

Ճիշտ է՝ Մատթէոս Բ.-ի օրօք թողեց ս. Էջմիածնի  
միաբանութեան շարքը հայոց Եկեղեցու վերանորո-  
գութեան խնդիրն այնքան խիզախ թափով հրատա-  
րակի վրա դնողը, ճիշտ է՝ Մատթէոս Բ.-ի օրօք  
տեղի ունեցաւ Արցախի թեմի առաջնորդական ընտ-  
րութեան շուրջն անցած-գնացածը, ճիշտ է՝ Մատ-  
թէոս Բ.-ի օրօք անպատիմ մնաց և նոյն իսկ նոր  
պաշտօնի հրաւիրւեց «անցեալ են ի վերայ 10—16  
ամք և սահման անազանեալ»<sup>26)</sup> եպերելի պատնէշի  
ետեղ թաղնւած թեմին նախկին կառավարիչ վեղա-  
րակիրը, սակայն այդ և դոյնանման ուրիշ հարցերում  
Մատթէոս Բ.-ի ունեցած մասնակցութիւնը զեռ  
կարու է լուսաբանութեան: Մինչ այս-մինչ այն, մեզ  
պահառում են խասրեր՝ ս. Էջմիածնում այդ ամենի  
շուրջն անցած-գնացածի նկատմամբ, փաստեր՝ Մայր  
Աթոռի «Թաթառա-Եւան» հոգեբանութեան նկատմամբ,  
— «միաբանութեան», որն իգմիրեան ընտրեալ կա-  
թողիկոսի 1909 թ. յունիսի 29-ի՝ նոյն «միաբանու-  
թեան» ուղղւած անդրանիկ խօսքում իսկ բնորոշ-  
ւած է՝ իբր «անձի բանակ ու լին»<sup>4)</sup>...

V

ՀՐԱԺԵՇՏԻ ԺԱՄԻՆ:

ԴԵՔՄԵՑԵՐԻ 11-Ի ԱՎԱԿԱՆ ՃԱՅԱ 9-ՆՆ  
Է...

Թիւրքահայոց «Երկաթէ Պատրիարք»-ի և համայն  
չայ աղդի սիրեցեալ Վեհափառ Հովւապեալ տանշւած-  
դաղրած սիրտն արգէն տւել է իր Վեշչէն զարիը...

Լալազինս ձախում-բօթում է Մայր Աթոռի գրմ-  
րեթներից մետաղեայ գուժկանը՝ հայաստանեաց Ե-  
կեղեցու հեռու հեռո՞ւ՝ ի սփիւռս աշխարհի ցիր ու  
ցան հօտին մասնակից անելու իր խոր խոցւած սրտի  
մորմոքին...

Պայնեց—կանգ առաս Սէլլու, որ շարունակ տարի-  
ներ գէալ ինքն եր ծգում սպեղանիքի կարօս Թիւր-  
քահայոց ամայացած արիւնալւայ գաշտեր-ծորակները,  
աւեր գիւղեր-աւանները...

Վերացա— հոգին, որ Երկնակամարի գիսաւորի թա-  
փով այցելութեան եկաւ ո. Գրիգոր Լուսաւորչի սե-  
բողով պատած նւիրական Գահին, եկաւ և այնքան  
շտապ, այնքան անժամանակ անցաւ-անհետացաւ յա-  
ւիտենականութեան զիրկը, անցաւ՝ թողնելով իր  
ետեւում առ ինքն տածած այնքան խորտակւած յոյ-  
սեր, այնքան զեռ նոր-նոր կոկոն բռնած սպասելիք-  
ներ...

Հրապարակեց իջա— կորովի կամքը, զիտակ իմացա-

կանք, աղքանւէր անհաստականք, գաղափարի զինւո-  
րակիրը...

Հայութեան շարժեցից Ելաւ մարդկացին ամենապեհ  
և ամենանուրը զգացմունքներին տիրացած անպայ-  
ման ժողովրդականութիւն վայելող Վեճջն ճահիկանը՝  
իր հետ տանելով իր է բնէ՛ դեհովարի ոդո՞՝ մեր ի-  
րականութեան շրջադժում միակ ընդունելի պահպա-  
նողական նախը...

Լուեց ի զէ է ը լէ ան ը...

Եւ Մայր Տաճարի կողքին լայն բացւած գերեզ-  
մանն այսօր իր ցուրտ խորքն է կանչում Հայոց Հայ-  
րապետի նւիրական անիւնը...

Մի քանի բոսէ և պատրաստ է հողաթումբը...

« Ահա և ամբն ինչ» — լուռւմ է տիեզերահոչակ  
Մեծ Ծերունու՝ կե Տոլստոյի վերջին շշնչիւնը...

Որդիական համբոյը իզմիրլեանի նւիրական հողա-  
թումբին...

Իզմիրլեաններ այլաւ լունեն+,— իզմիրլեաննէ՛ր, որոնք  
անհատական ուրոյն հանճարին — գիտակցութեան,  
բմբոնողութեան և կամքին կից՝ թերեւս առառաւելն  
իրենց վայելած անպայման ժողովրդական-նեան մշշ  
են զանում անշեղ հաստատակամութեամբ հեղինա-  
կելու և գործելու կրկնակի վստահութիւնը՝ անողոք  
իրականութեան երերմնաշատ օրէցօրում...

Արդեօք լինելու է իզմիրլեանի գէթ սերմանածը  
խնամող-անեցնող մէկը...

Արդեօք բացւելու են կոկոնները, կանաչաղարդւե-  
լու է երկիրը...

Ոչինչ մխիթարական ներկալից՝ — Թիւրքահայու-  
թիւնը՝ խառնակ, անպատճիարը, Ոռուսահայութիւնը

en masse՝ իր ապրումներին գրեթէ անդիտակ, Եշմիածինը՝ կրկնակի՝ «անմիաբան»...

Մասնաւէ, ամեն է պատկան...

19 XII 1910 P.M. P.M. U. C.-U.

*Uniqueness:*

# ՅԱԻԵԼԻԱԾՆԵՐ

Ա.

ՄՈՍԿԻԱՅԻ ՈՂՋՈՑՆՀ.

(Առաջ է 1909 ն-ի մայիսի 25-ին, Օդեսայում՝ Վեհաժար հղչըլեանին՝ Թիգրիսյաց ժամանելու առնիւտայած հանդիսաւոր ճաշկերոյնին<sup>27)</sup>)

ԶԵՐԴ ՄՐՑՈՒԹԻՒՆՆ,

ՎԵՀԱՓԱՌԻ ՏԵՇ.

Հեռաւոր հիւսիսի մայրաքաղաք Մոսկվայի հայ հասարակութեան ամենանւիրական զգացմունքների թարգմանը հանդիսանալու պատիւն ունինք այստեղ մենք—նւաստս և ընկերակիցս<sup>28)</sup>,—զգացմունքների, որոց շուրջն է խմբւել այսօր համայն հայութիւնը: Պատւէր ունինք սրտագինս ողջունել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետիդ բարի գալուստը, որդիական ջերմաշերմ համբոյր դրոշմել Հայաստանեալց առաքելական ս. Եկեղեցու Քահանայապետիդ ս. Աղին:

Տարիներ, շարունակ մրրկածուփ, մրրկախօս տարիներ, հայութիւնը բեկուած ունի Ձեր վրա իր սպասելիքները—երեմն՝ իրը Կ.-Պոլսի Պատրիարքի, Երբեմն՝ իրը Հայրապետական Գահի թեկնածւի: Իզմիրեան անունն ի վաղուց անտի մականուն է՝ կորովի

կամքի, զիտակ իմացականութեան, ազգանւեր անհատականութեան, գաղափարի զինւորագրութեան—տարրե՛ր, գործօն տարրեր, որոնցով միայն համուրեք կայուն է բանաստեղծ-քաղաքացու հիւսւածք՝ «ազգապահութեան հրաշալի շինուածք»-ը<sup>29</sup>):

Հայ ազգը, որի հոգեոր զեկավարութիւնը ստանձնած ունիք այժմէն, մի բեկոր է մարդկութեան, բեկոր՝ իր առանձնայատուկ խառնածքով, բեկոր՝ իր ինքնատիպ պատմական անցեալով: Բացւում է ազգային պատմութեան մի նոր էջը: Լուսաճանանչ ծիածանը կամարել է անցնելիք ուղին: Վստահ սրտով հետեւում ենք ուղեոր-առաջնորդիդ, — առաջնորդիդ, որ վերջին պատրիարքական ուխտովդ սահմանադրել-սկզբնադրել էք՝

«Հայ եկեղեցին իր որբունեան, լեհունեան և առանձայնունեան մէջ պէտք է պահպանեն+» <sup>7)</sup>).

«Օքն+ ըստենալը և անոր հայուսակ լըւլըւը իւնանի անողեկ նասում ճը, որ գոյնոցիում ժովու մէջ էր պարս-բերէ» <sup>9)</sup>):

Եւ յիրաւի՛. Եկեղեցին՝ իբր ազգային կայունութեան ապաւե՛ն, Օրէնքը-կանոնը՝ իբր մերայինների օրէցօրի գրաւիչ յաշորդականութեան գրաւական—աւելի՛ն խնդրելիք, աւելի՛ն պաղատելիք չունինք Զերդ Սրբութիւնից...

Ցնծաւ հայութիւն, ահա գալիս է ազգընափիր Քահանայապետդ՝ գլուխ անցնելու նւիրական զգացմունքներիդ...

Ցնծացէ՛ք նւիրական վայրեր, ցնծաւ էջմիածին, — էջմիածին—ըստ նոյն բանաստեղծ-քաղաքացու կերւածի՝ «մշտականաչ կիպարիս, Հայաստանի սրտի վրա

տնկած»), էշմիածի՞ն «Հայստանեալց մրմունչների  
ընդունարան»։ ցնծա, «ահա գալիս է առաքելաշաւիղ  
Փեսադ՝ հովւել բո ժողովուրզը և փառաւորել քեզ»<sup>30)</sup>։  
Ողջոյն Հովւապետ-Փեսայիդ։

19  $\frac{v}{25}$  09 թ.,      թժ. Ա. Շ.-Ն.

Օդ ես ասա:

Բ.

ԿԵՆՍԱԴՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ: ՄԱՀԱԳՈՅԺԸ: ԱՐՁԱ-  
ՆԱԳՐՈՒԹԻՒՆ: ԲԺՇԿԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ:

ա) ԿԵՆԱԿԱԴՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ (31)

«Տ. Տ. Մատթէոս Բ. Վեհ. Կաթողիկոսը ձնուել  
է 1845 թ. վետրուարի 12-ին Կ. Պօլսի Գում-Գա-  
րու թաղամասում և Տեառնրնգառաշի առթիւ ա-  
նուանակոչուած է Սիմէօն։

«Մինչև 1859 թ. աշակերաեց Մայր վարժարանի  
մէջ, ապա անցաւ Գում-Գարուի վարժարանը, ուր և  
աւարտեց իր դպրոցական շրջանը։

«Իզմիրեան ազգանունը ստացել է իր պապից,  
գերձակ Մարտիրոսից, որ Զմիւռնիացի—Իզմիրցի էր։

«Նրա հայրը, նոյնպէս գերձակ, մի բարեպաշտ ար-  
հեստաւոր էր և իննը զաւակների տէր, որոնցից եօ-  
թերորդը Սիմէօնն էր։ Նրա ուսուցիչներն են եղած՝

Մկրտիչ Մեղապուրեան, բժ. Ներսէս Մեղապուրեան, Գէ-  
որդ Զափրաստճեան, Յարութիւն Թիւլեան և այլք:  
«1862 թ. ուսուցչական պաշտօն ստացաւ Օթա-  
գիւղի Ա. Աստուածածնի Եկեղեցում:

«1864-ին Պօղոս պատրիարք Թաքթաքեանի հրա-  
մանով Յովհաննէս եպ. Կապուտիկեան ս. Աստուածա-  
ծին Եկեղեցու տիրացու Սիմէօնին ձեռնադրեց սար-  
կաւագ, տալով նրան Մատթէոս անունը: Այն ժամա-  
նակները Կ. Պօլսի Եկեղեցականութեան պատիւ բե-  
րող Սահակ ա.-ք. Տէր-Սարգսեան հովանաւորեց շա-  
րունակ Երիտասարդ սարկաւագին, շատ անգամ նոյն-  
իսկ հիւրընկալեց իր յարկի տակ:

«1869 թ. Պատր. տեղապահ Արիստակէս սրբ.-ի  
օրով, Ազգային Վարչութիւնը գնահատելով Մատթէոս  
սարկաւագի կարողութիւնները, հրամայեց կոչել նրան  
կուսակրօնութեան: Ձեռնադրողն էր դարձեալ նոյն  
Կապուտիկեան սրբազանը:

«Քառասունքը լրացնելուց անմիջապէս յետոյ Խրի-  
մեան Հայրիկ պատրիարքը հրաւիրեց նրան անծնա-  
կան քարտուղարութեան:

«Երիտասարդ Եկեղեցականը այդ օրից ծգտում է  
մօտից ծանօթանալ, ուսումնասիրել նախնեաց մատե-  
նագրութիւնը և Եկեղեցական պատմութիւնը: Այդ ու-  
սումնասիրութեան արդիւնքն եղաւ նրա հմտալից աշ-  
խատութիւնը, որ կրում է «Հայրապետութիւն Հա-  
յաստանեալց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ և Աղ-  
թամար ու Սիս անունը:

«1872-ի մարտի 17-ին քուեկից բացարձակ առա-  
ւելութեամբ առաջին անգամ Կրօնական Ժողովի ան-  
դամ և ատենապետ ընարուեց: Այդ շրջանում մշա-

կուեց ի միշի այլոց և «Ազգային Վարժարանաց բարեկարգութեան հրահանգը», որ երկար ժամանակ զեկավարող ուղեցոյցն էր տաճկահայ դպրոցների համար:

«1872-ի գեկտեմբերի 29-ին Սսոյ Կաթողիկոսական խնդրի համար կազմուած յանձնաժողովի գործօն անդամը եղաւ:

«1873-ի յունուարի 29-ին իր օրինակելի ժառայութեան համար պատրիարքական տեղապահ Աղասեան Նիկողայոս սրբազնի կողմից ծայրագոյն վարդապետութեան աստիճան ստացաւ:

«1874-ին Պալլքէսէրի վիճակի առաջնորդ ընտրուեց: Ընտրող թեմի փափազն էր, որ իրանց ընտրելին նախ եպիսկոպոսանայ և այնպէս դառնայ վիճակ: Կրօնական Ժողովը Եպիսկոպոսական վկայագիր տուեց, բայց գործադրութիւնը ինչ-ինչ արգելքների հանդիպեց և Մատթէոս ծ. վարդ. հրաժարուեց առաջնորդութիւնից:

«1875-ի հոկտեմբերին Գէորգ Դ. Կաթողիկոսը լանջախաչ ուղարկեց Մատթէոս ծ. վարդ. և 1876-ի յունուարին հրաւիրեց նրան Էջմիածին եպիսկոպոսացնելու:

«Ապրիլի 9-ին երիտասարդ վարդապետը մեկնեց գէպի Մայր Աթոռ Ներսէս պատրիարք Վարժապետեանի յանձնարարականով: Մայիսի 17-ին, Համբարձման տօնի օրը, մեռնադրուեց Ս. Էջմիածնի միաբան եպիսկոպոս:

«Այնուհետև Մատթէոս սրբազնը աւելի մեծ թափով մասնակցեց պատրիարքարանի բոլոր ժողովներին և գրեթէ միշտ տեղեկաբեր զեկուցանող եղաւ:

«1880 - ին կրօնական խորհրդական ընտրուեց.

1883-ին Կաթողիկոսական ժողովի անդամ ընտրուելով պատրաստեց 115 մեծադիր էջերից կազմուած մի հետաքրքիր տեղեկագիր, որ յետոյ հրատարակուեց իսկ:

«Մատթէոս Եպիսկոպոսը շատ գաւառական պաշտօնների կոչուեց, բայց առողջական դրութեան պատճառով միշտ մերժեց:

«1886-ի յունուարի 3-ին Եղիպատոսի Գաւառական ժողովը միաձայն ընտրեց նրան առաջնորդ Եղիպատոսի: Չորս տարի վարելով այդ պատրասխանատու պաշտօնը, հրաժարուեց կլիմայական անյարժարութեան պատճառով:

«Ազգային Վարչութեան առաջարկութեամբ, Սուլթանի կողմից վարձատրուեց երրորդ կարգի Մէնիստիկի պատուանշանով, իսկ Եղիպատոս Եղած ժամանակ Հարէշստանի Մէնելիք Գ. Ժագաւորին հայ լեզուով օրէնութեան թուղթ ուղարկեց, որի փոխարէն թագաւորը Ոսկեղէն Խաչ նշանը տուեց առանձին արքայական հրավարտակուի:

«Եղիպատոսի առաջնորդութիւնից յետոյ Կ. Պօլսում Սկիւտարի Ս. Կարապետ Եկեղեցում նորից քարոզիչ կարգուեց և միաժամանակ Կենդրոնական վարժարանի բարձր դասարաններում կրօնի դասեր ստանձնեց առանց զրամական ակնկալութեան:

«1892 թ. Էջմիածնում գումարուած Համազգային ժողովը Խզմիրլեանին ընտրեց Հայրապետական Աթոռի երկրորդ թեկնածու:

«1894-ի գեկտ. 7-ին, չորեքշաբթի օրը, Ազգային ժողովից Կ. Պօլսի պատրիարք ընտրուեց 67 քուէով (76-ից): Նոյն ամսուայ 20-ին Բարձր Գուռը վաւերացրեց այդ ընտրութիւնը, իսկ 26-ին ժողովրդի ցըն-

Ճութեամբ Սկիւտարից Պատրիարքարան առաջնորդուեց:

«1896 թ. Իղմիրլեան պատրիարքը ստիպուեց հրաժարուել պատրիարքական գահից և Կ. Պօլսի չարդերից մի փոքր յետոյ աքսորուեց Ս. Երուսաղէմի վանքը, ուր մնաց ամբողջ 12 տարի:

«Տաճկաստանի 1908 թուի յեղաշրչման շնորհիւ Իղմիրլեան աքսորավայրից Կ. Պօլս գարձաւ և նորից ընտրուեց պատրիարք: Բայց այդ պաշտօնը միայն Երեք ամիս վարեց:

«1908 թ. Էջմիածնում գումարուած վերջին Համազգային Կաթողիկոսական Ժողովը նոյեմբերի 1-ին գրեթէ միաձայն ընտրեց նրան Ամենայն Հայոց Կաթողիկոս:

«Ապրիլի 7-ի հեռագիրը աւետեց, որ Թագաւոր Կայսրը բարեհանել է վաւերացնել այդ ընտրութիւնը:

«1909 թուի մայիսին Կ. Պօլսից նա մեկնեց գէտի Ռուսիա: Օդեսսայի վրայով նա նախ գնաց Պետերբուրգ, ներկայացաւ Թագաւոր Կայսեր, տեսնուեցաւ նախարարապետ ալ. Ստոլիպինի հետ և վերադարձաւ Ս. Էջմիածին ճանապարհին օրհնելով իր ժողովրդին:

«Թիֆլիզ նա մնաց մի ամբողջ շաբաթ: Ներկայացաւ Կովկասի Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովին և մեկնեց Մայր Աթոռ, ուր հասաւ յուլիս ամսին:

«1909 թ. սեպտեմբերի 13-ին նա հանդիսաւոր կերպով Մայր տաճարում ընդունեց Ս. Օծումը:

«1910 թ. ամառը, Կովկասի Փոխարքայի Պետերբուրգ մեկնելուց առաջ, Եկաւ Թիֆլիզ, տեսնուեց կոմսի հետ Մցխէթում հայոց Եկ.-Ճխ. դպր. մշակուելիք նոր կանոնադրութեան առթիւ և շուտով գարձաւ Ս. Էջմիածին:...»

բ) Մ ա հ ա գ ո ւ թ ա յ ա լ ը<sup>31)</sup>

1910 թ., դեկտեմբերի 11-ն, շաբաթ, Ս. Էջմիածին (Շրջաբերական հեռագիր):

«Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսը լուսադիմին  
սրտի պայմանավորման հանդեաւ ի Տէր:

«Թաղումը տեղի կունենայ կիւրակի, դեկտեմբերի  
19-ին:

«Առաջադրում եմ բոլոր Եկեղեցիներում պատարագներից յետոյ հոգեհանդիսաւ կատարել՝ յիշելով ազօթքների մէջ նորին Սրբութեան անունը մինչև նոր կաթողիկոսի ընտրութիւնն ու հաստատութիւնը:

Տեղակ՝ Գէորգ Արքեպիսկոպոս»»

գ) «Ա յ ձ ա ն ա գ ր ո ւ թ ի ւ ն ։<sup>32)</sup>

«Մենք, ներքոյ ստորագրողներս, այսօր առաւօտեան 9 ժամին հրաւիրուեցինք Վեհարան, ուր մեղյալտնեցին, որ նորին Սրբութիւն Տ. Տ. Մատթէոս Բ. առաւօտեան լուսադէմին աւանդել է հոգին. Մայր Աթոռի բժիշկ Տէր-Խաչատրեանը յայտնեց, որ նորին Սրբութեան մահը առաջացել է սրտի կաթուածից (параличъ сердца): 1910 թ. 11 դեկտեմբերի, ի Վեհարան ս. Էջմիածնի:

ԲԺ. Տ.-Խաչատրեան.

Անդամք Սինօղի՝ (ստորագրութիւններ)

Կ. Պ. Պրօկուրորի Սինօղի՝ (ստորագրութիւն)

Կ. Պ. Ատենապետի՝ (ստորագրութիւն):»»

Դ) Բ. Ճ. Գ. ՌԵԿՈՒՄԱՆԻ ՀԵՅՐ-ՌԵԿՈՒՄԱՆԻ<sup>33)</sup>

«Որ Վեհափառք հիւանդ էր վազուց—այդ փաստ է:  
«Դեռ Պետերբուրգից Նախիչևան հասնելով, նա  
այստեղ դիմել էր բժիշկների խորհրդին. Թիֆլիզում  
նոյնպէս դիմած է եղել բժիշկներին, և նոյնիսկ բժիշկ-  
ներից եղել են ասողներ, որ Վեհը երկար չէ կարող  
ապրել, որ նա սրտի արատ ունի:

«Գնալով էջմիածին՝ նա նորից ու նորից դիմել է բր-  
ժիշկներին իր հիւանդութեան մասին խորհրդակցելու:

«Էջմիածնում, երբ թաղման սգահանդիսին եկող  
պատգամաւորներից մէկը հիւանդացաւ, խորհրդակ-  
ցութեան համար կանչուեցին մի քանի բժիշկներ, ի  
միշի այլոց հրաւիրել էին և ինձ:

«Եւ ահա այստեղ, տեսնուելով վանքի բժշկի հետ,  
որ յամենապն դէպս Կաթողիկոսի հիւանդութեան մա-  
սին աւելի կարող էր տեղեկութիւն ունենալ, քան  
մի որևէ ուրիշ բժիշկ, ես դիտմամբ խօսակցութիւն  
սկսեցի Կաթողիկոսի հիւանդութեան մասին:

«Այդ խօսակցութեանը ներկա էին բժիշկներ՝ Ա. Խ-  
ատիսեան, Արծրունի, Միրզոյեան, Տէր-Խաչատրեան  
և տողերիս գրողը: Ահա բժ. Տէր-Խաչատրեանի կար-  
ծիքը. «Ինձ յաշտի էր, ասաց նա, որ Վեհափառք ու-  
նի սրտի թուլութիւն, նոյնիսկ սրտի արատ, որը այն-  
քան էլ պարզ չէր երեսում:

«Սուր կերպով հիւանդացաւ նոյեմբերի 29-ին, երբ  
նոյն իսկ երեանից հրաւիրուեցին բժիշկներ: Վեհին  
քննելուց յետոյ՝ բժիշկները գտան, որ նա հիւանդա-  
ցել է արէնոչարդիս կոչուած հիւանդութեամբ և ա-

ուաշացել է սըտի սո-ր լայնացո-մ և այն էլ սասարին,  
այնպէս որ՝ սիրար սովորական սահմանից դուրս զա-  
լով, հասել է վերեռում մինչև երկրորդ կողը»:

«Սովորաբար սրտի վերեի սահմանը գանւում է չոր-  
րորդ և հինգերորդ կողերի մէջ տեղը։ Ահա մի նոր  
ապացոյց, որ Վեհի սիրար, իբրև թուլութեան հե-  
տեանք, ունեցել է և լայնացում, թէպէտ ոչ այնքան  
նկատելի մեր սովորական հետազօտական մեթոդների  
համար, որովհետեւ գժուար է երեակայել, որ մի ցաւի  
բռնումից սիրտը կարողանար այդ չափով լայնանալ։

«Բացի այդ՝ Վեհր ունեցել է և չնչըրակների հայծ-  
րացո-մ (arteriosclerosis) և այդ կարծրացումը բա-  
ւականին զարգացած է եղել, այնպէս որ բժիշկ Նա-  
ւասարդեանը դեռ քանի ամիս առաջ հետազօտելով  
Վեհին՝ անհրաժեշտ է գտել միանգամայն արգելել թէ՛  
ծխախոտի և թէ՛ առհասարակ սրտի վրայ վատ ագ-  
դող բարձրացների և ուտելիքների գործածութիւնը և  
խորհուրդ է տուել շարունակ ընդունել եօդ (Jodium)  
և ամենայն օր կատարել թեթև զբոսանք։

«Բայց զժբաղդաբար, ինչպէս ինքը պ. Նաւասար-  
դեանն ու վանքի բժիշկ Տէր-Խաչատրեանն էին պատ-  
մում, Վեհր բժիշկների խորհրդին լուրջ ուշադրու-  
թիւն դարձրած չէ...»

«... Նորա արագընթաց մահը հետեանը է միայն  
և միմիայն այն հին հիւանդութեան, որով տառա-  
պում էր հանգուցեալլը...»

ՃԱՅՈԹԱԻԹԻԻՒԵՐ

- 1) „Արարատ“, 1909 թ., № 5—6<sup>o</sup> Թիւրքահայոց Պատրիարք Մատթէոս Արքեպիսկոպոս հզմիրլեանի 1909 թւի յունաբարի 1-ի անդրանիկ կոնդակը:
  - 2) „Արարատ“, 1910 թ., № 2<sup>o</sup> Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Մատթէոս Բ.-ի 1909 թւի սեպտեմբերի 24-ի անդրանիկ կոնդակը:
  - 3) „Մշակ“, 1909 թ., № 122—Arago-ի<sup>o</sup> „[հզմիրլեան ընտրեալ] Կաթողիկոսի հրաժեշտի ձառը Թիւրքահայոց Ազգային ժողովում“ (1909 թ. մայիսի 22.):
  - 4) „Մշակ“, 1909 թ., № 146<sup>o</sup> „[հզմիրլեան ընտրեալ] Կաթողիկոսի ծրագրական ձառը“: Այս և յետազայ քաղաքացիների բոլոր ընդգծումները մերն են: Բժ. Ս. Շ.-Ն.
  - 5) „Մշակ“, 1909 թ., № 128—հզմիրլեան ընտրեալ Կաթողիկոսի<sup>o</sup> ի պատասխան այլ և այլ պատգամաւորութիւններին ասածից:
  - 6) „Մշակ“, 1909 թ., № 127—հզմիրլեան ընտրեալ Կաթողիկոսի<sup>o</sup> ի պատասխան այլ և այլ պատգամաւորութիւններին ասածից:
  - 7) „Մշակ“, 1908 թ., № 258<sup>o</sup> „հզմիրլեանի [երկրորդ պատրիարքութեան] գահակալութիւնը և ուխտը“:
  - 8) „Հոգիւ“, 1909 թ., № 38—Բենիկ վարդապետի<sup>o</sup> „[Ս. Էջմիածնի Գէորգեան] Ճեմարանի 35-րդ տարեդարձի օրը“:
  - 9) „Մշակ“, 1909 թ., № 17<sup>o</sup> „Պաշտօնական ընդունելութիւն հզմիրլեան պատրիարքի մօւ“:
  - 10) „Նոր-Դպրոց“, 1909 թ., № 6—7, էջ 8:

- 11) „*Մշակ*“, 1909 թ., № 270—Ա. Քալանթարի՝ „*Ցեղոնդիւններ հզմիրլեանի մասին*“:
- 12) „*Մշակ*“, 1909 թ., № 210՝ „Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծրագիրը“ (առաջնորդող):
- 13) „*Հորիզոն*“, 1909 թ., № № 27 և 28՝ „Ժամանակաւոր Հրահանգ Եկեղեցական-ծխական դպրոցների մասին“ (Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոս Սուրբէնեանցի ստորագրութեամբ):
- 14) „*Արարատ*“, 1909 թ., № № 10—11, էջ 783՝ „Ժամանակաւոր Կանոններ վանական կալուածների կառավարութեան համար“ (Տրւած է 1909 թւի № 217, 225, 331, 233, 235, 239 — Շրջաբերական Կոնդակներով՝ ի հրահանգութիւն Թեմական Խորհուրդներին և „ի լրումն“ նախկին „13“ ժանոնութեան մէջ յիշած „Ժամանակաւոր Հրահանգ“-ի: — Այս և նախկին ծանօթութեան մէջ յիշատակւած Հրահանգ-Կանոնների առթիւ տես իմ յօդածը՝ „*Հովիտ*“, 1910 թ., № № 10 և 11, ևս՝ „Հայոց Եկեղեցու վարչութիւնը և ծուխը՝ ըստ Ռուս Պետրէնքի Տ. I մ. (հրատ. 1896 թ.) [Եկեղեցի-Դպրոց]“ աշխատութեանս „*Յաւելւածները*“ էջ 747—759:
- 15) „Ժամանակաւոր Հրահանգ Թեմական ժողովի“ — առանձին հրատարակութիւն „*Հրամանաւ Տ. Տ. Մատթէոս Բ. Արքապնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց*“, Վաղարշապատ, Տպարան Մալլ Աթոռոյ Ս. Եջմիածնի, 1910 թ.:
- 16) „*Արարատ*“ 1906 թ., մայիս, — „*Ալիք*“, 1906 թ., № 15 և այլն:
- 17) „*Հովիտ*“, 1909 թ., № № 13, 14, 15, 17, 18, 19, 20, 21, 23, 25, 26, 28, 34, 39, 41 և 43 — իմ՝ „Հայոց Եկեղեցու վարչութեան և ծուխի իրաւասութիւնից“ յօդածը: Նոյնը տես ևս՝ ծանօթ. „14“-ում ցուցած աշխատութեանս „*Յաւելւածները*“ — յատկապէս էջեր՝ 230, 240, 245, 256—257, 267—268, 275, 279 և այլն:
- 18) „*Մշակ*“, 1810 թ., № № 262, 264 և 258 — Կար. Եաղուքեանի՝ „Նոր ուղղութիւն“ յօդածի՝ „Թեմական վերանորդութիւն և հին օրէնքը“, „Թեմական առաջնորդութիւն ընտրութիւնը և «Պօլօծենիէն» և „Թեմական խորհուրդների կազմակերպութիւնը և հին օրէնք“ — հատւածները: Համեմատել ևս՝

ծանօթ. „17“-ում ցուցած յօդածս և աշխատութիւնս՝ էջ 125  
և այլն: — Ապա՝ Վեհափառ հզմիրլեանի հրահանգած Թեմական  
կաղմակերպութեան հարցին կը առնամ Թեմական ժողովներին  
և Թեմական Խորհուրդներին նորելիք յատուկ աշխատութեանս  
էջերում:

19) „Մշակ“, 1910 թ., № 235—Կար. Եաղուքեանի՝ „Ժո-  
ղովրդական սկզբունք և ժողովրդի անտարբերութիւն“: Ընդգծումը  
հեղինակին է: Բժ. Ս. Շ. Դ.

20) „Հովիտ“, 1910 թ., № 34—Գար. Ենդիրաբեանի՝ „Նա-  
խարարապետ պ. Ստոլիպինը և Կարապետ Եաղուքեանը“:

21) „Արարատ“, 1910 թ., № 4:

22) „Հովիտ“, 1910 թ., № № 28, 29, 30, 32 և 33—իմ՝  
„Մայր Ամոռի և Թեմական Հաստատութիւնների 1910 թւի  
«Նախանշչի» առմիւ“ յօդածը: Նոյնը տնս ևս ծանօթ. 14-ում  
յիշածս աշխատութեանս „Ցաւելածները“:

23) Բժշկապետ Ա. Բաբայեան՝ „Եկեղեցական առողջաբանու-  
թիւն“, Թիֆլիս, 1909 թ.:

24) „Մշակ“, 1910 թ., № 87—Բժշկապետ Ա. Բաբայեանի՝  
„Եկեղեցական առողջաբանութեան շուրջը (Հրապարակախօսա-  
կան զրոյց յօդուտ Թիֆլիսի Հայուհ. Բ. Հ., կարդացւած ապրիլի  
5-ին):

25) „Հովիտ“, 1910 թ., № 6:

26) Յուսիկ արքեպիսկոպոս Մովսիսեանի 1907 թւի յուլիսի  
24-ի № 466՝ ս. Էջմիածնի Սինոդին տւած յայտարարութիւ-  
նից—տես Բենիկ վարդապետ՝ „Էջմիածնի արդարութիւնը. Ա.  
մասը“, Թիֆլիս, 1910 թ., էջ 56:

27) Լոյս է տեսել „Հովիտ“-ի 1909 թւի սեպտ. 13-ի—Նո-  
րին Վեհափառութեան ս. Օճան օրւայ—№ 34-ում՝ „Ողջո՞յն  
Վեհափառ Հայրապետին“ վերատառութեամբ, և ապա՝ կցւել է  
Նորին Վեհափառութեան նորածս՝ „Հայոց Եկեղեցու վարչու-  
թիւնը և ծուխը՝ ըստ Ռուս Պետ. Օրէնքի XI հատ. I մասի  
(հրատ. 1896 թ.)“ աշխատութեանս (Մոսկվա 1909 թ.):

28) Մոսկվայի երկրորդ պատգամաւոր—Բժ. Ս. Սուլէնեանց:

29) „Մշակ“, 1908 թ., № 9—Ամքատ Շահ-Ազիզի՝ „Զո-  
հեր“ բանաստեղծութիւնը:

- 30) Ամբատ Շահ-Ազիզ՝ „Յորելեանի տարեղարձ“, Մոսկա, 1893 թ., էջ 72 (1892 թւի ապրիլի 9-ի յորելեանի ծառից):  
31) „Հովհաննէս“, 1910 թ., № 36:  
32) „Արարատ“, 1910 թ., № 12:  
33) „Լոյս“ (Ն.-Նախիջևան), 1911 թ., № 2—Բժ. Գ. Իհեղ- գեանի՝ «Անհրաժեշտ բացատրութիւն»:

## ՑԱՆԿ\*)

Եղ.

I. ՌՈՒՍԻԱ	ԺԱՄԱՆԵԼԸ:	ԱՆՀԱՏԱ-
ԿԱՆՈՒԹԻՒՆԸ . . . . .		5— 7
II. ՊԼԱՏՖՈՐՄԱ-ԾՐԱԳԻՐԸ . . . . .	7— 29	
Ա. Պլատֆորմա - Ժրագրի հիմնական կերպ՝ —ա) Պատրիարքի պաշտօնը. —բ) Հայրապետի պաշտօնը. —գ) Բարենորոգութիւնների հարցը. —դ) Կաթողիկոս յայտարարւելուխնդիրը. —ե) Երդման հարցը. —զ) Հայաստանեայց Առաքելական ս. Եկեղեցին. —է) Գործելակերպը և գործունեութեան էութիւնը. —թ) Պլատֆորմա-ժրագրի մանրամասները՝		
ա) Կաթողիկոսական Աթոռների յարաբերութեան հարցը. —բ) Եկեղեցի և Աղդ. —զ) Վանքերը և նրանց սեպհականութիւնները. —դ) Կրթական գործը. —ե) Ս. Էջմիածնի միաբանութեան ուղղաձից . . . . .	23— 29	
III. ԻՉՄԻՐԼԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿՆԵՐԻ		

\*) Յ. Գ.: Գրքովկիս տպագրութեան ժամանակ՝ I, IV և V հատւածները լուս տեսան «Հովիս» շաբաթաթերթի 1911 թի №№ 6 և 8-ում:

Վեհափառ հզմերեանի պատկերն արտատպւած է Ս. Ս. Տէր-Բարսեղեանի լուսանկարից (Թիֆլիս՝ 1910 թ.):

II

<b>ՀՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ</b>	29—32
IV. ԻՉՄԻՐԼԵԱՆԸ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ	
<b>ԳԱՅԻ ՎՐԱ</b>	32—53
V. ՀՐԱԺԵՇՏԻ ԺԱՄԻՆ	54—56
<b>ՅԱԻԵԼԻԱԾՆԵՐ</b>	
Ա. Մոսկւայի ողջոյնը . . . . .	57—59
Բ. ա) Կենսագրական ակնարկ:—բ) Մա- հագոյժը:—դ) Արձանագրութիւն:—դ) Բժրշ- կի վկայութիւնը:	59—66
ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ	67—70
<b>ՑԱՆԿ</b>	I — II

V և VI Համարներ մանաքարտ սփառք 18. 9  
 ՏԱ 1121 պիտինարա առիշտ նաև որ պահան-  
 ձան 8 և 8 ՏԱ  
 1122 Ա. Ա առաջարկ մանաքարտ պահանձ  
 ՎՐԻԴԱԿ. էջ 5-ում „ուղ“-ի տեղ կարդալ „եօթ“: Այսպահ  
 էջ 5, 57 և 59-ում „25“-ի „“ „24“:  
 էջ 68-ում „1810“-ի „“ „1910“:

- Թիւնը և Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցների վարչական և ուսումնական կարգ ու կանոնի՝ դիսցիպլինայի միակերպութեան գաղափարը. էջ 84, Մոսկա, 1900 թ., (սպառած) գինն է . . . . . 1 ր.
- 7) «Մշակութակի առմիւ»—1896/7 թ.թ. Կուսակցական պայքարը. էջ 98, Մոսկա, 1900 թ., (սպառած) գինն է . . . . . 1 ր.
- 8) Հայ Դպրոցի ցաւերից. I. Վարչականի շուրջը. էջ XIX+44, Մոսկա, 1900 թ., (սպառած) գինն է . . . . . 40 կ.
- 9) Մարդասիրութեան և աշխատանքի ազնիւ զինուրը՝ հերի Ալեքսէկիլ Վեսելովսկի (18<sup>XII</sup>/27 88—1899 թ.թ.). էջ 82 [հեր. Ալ. Վեսելովսկու լուսատիպ պատկերով], Մոսկա, 1901 թ., (սակաւաթիւ) գինն է . . . . . 60 կ.
- 10) Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցների կանոնադրութեան նախագիծը. էջ XX+172+VIII [Կոմս Յովհաննէս Լազարեանցի լուսատիպ պատկերով և մի գունաւոր վիմատիպ աղիւամկով], Մոսկա, 1902 թ., (սակաւաթիւ) գինն է . . . . . 1 ր.
- 11) Մի տեղեկագիր առմիւ (Երևանի Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցի 1897—1900 ուս. տ.). էջ 32, Մոսկա, 1903 թ., գինն է . . . . . 30 կ.
- 12) 1905 թւի օգոստոսի 1-ի Ուկազը և Ժամանակաւոր կանոնները. էջ XXII+90+VII, Մոսկա, 1907 թ., (սակաւաթիւ) գինն է . . . . . 50 կ.
- 13) Սեղրակ Մանկինեանը՝ իբր տեսուչ Երևանի Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցի (1892 թ. սեպտեմբեր—9 1895 թ. յունաւոր). էջ IX+100, Մոսկա, 1907 թ., (սպառած) գինն է . . . . . 50 կ.
- 14) Բանաստեղծ-քաղաքացին դպրոցական նւիրական ուխտի ասպարէզում. էջ 20 (Սմբատ Շահ-Ազիզի պատկերով), Մոսկա, 1908 թ., գինն է . . . . . 10 կ.
- 15) Դպրոցների նիմական - դրամական ապահովութեան հարցը. I. Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցների եկամտի աղբեւները (Պաշտօնական ցանկը և ցայսօր անտես առնւածը). էջ XX+84+IV, Մոսկա, 1908 թ., (սակաւաթիւ) գինն է . . . . . 50 կ.

- 16) Հայոց եկեղեցու վարչութիւնը ծուխը՝ ըստ Ռուսական Պետական Օրէնքի XI հատ. I մասի (հրատ. 1896 թ.) [Եկեղեցի—Դպրոց]. էջ IV + IV + 180 + VI, (առանձին յաւելածներով) Մոսկվա, 1909 թ., գինն է . . . . . 60 դ.
- 17) Վեհափառ Իզմիրեանը, էջ 70+II [Պատկերով], Մոսկվա, 1910 թ., գինն է . . . . . . . . . . . 20 դ.
- 18) Հայոց եկեղեցու վերանորոգութեան և վարչականի Կարգաւորման վերաբերեալ Նիւթերից—16-րդ աշխատութեանս «Յաւելածներ»-ը (մամուլի տակ է):
- 19) Քրիստոնեայ հաւատացեալը՝ արդի Կրօնական ծգնաժամի հանդէպ [ս. Էջմիածնի միաբան Երևանդ Վեր-Մինասեանի յօդածների առթիւ] (մամուլի տակ է):

ULB Halle  
002 251 167

3/1



Դիմել  
Москва, Армянский пер., 7, Д-р С. Г. ШАХЪ-НАЗАРОВУ.  
Russia, Moscou, Armianskij per., 7, D-r S. SCHAH-NASAROFF.  
Тифлисъ, Центральная Книжая Торговля.  
Книжный магазинъ „Гуттенбергъ“.  
Баку, Книжный магазинъ „Сотрудникъ“.

Ըստ Հայոց

ԲԺԻՇՆ ՄԻԹԻՕՆ ՀԱՅ-ՆԱԶԱՐԵԱՆՑ

# ՎԵՀԱՓԱՍ ԻՉՈՒԻՐԼԵԱՆՑ

«Ակզրունքներու տարբերութիւնը ա-  
լ բերէ:  
ասութիւն և տար-  
նիլ, ոչո՞ւ  
շփուելու այ, որ  
։»  
Իշխանական



հ, Մուկւա.